ԼՈՌ ԶՈՒՂԱՔ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԱ ՏԱՐԻ, ԹԻՒ 98, ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013

50 ՀԱՅՐԵՐ

30 ԽՈՐԷՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԵՐՋԱՆԿԱՅԻՆԱՏԱԿ Տ.Տ. ԶԱՐԵՀ Ա ԵՒ Տ.Տ. ԽՈՐԷՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ 50 ԵՒ 30-ԱՄԵԱԿՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ ՅՈՒԾԵՐԵԿՈՅ

Շաբաթ՝ հոկտեմբերի 5-ի երեկոյեան ժամը 8-ին, նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի եւ նախաձեռնութեամբ Կրօնական Խորհրդի, Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ կաթողիկոսներ՝ Տ.Տ. Զարեհ Ա Փայասլեանի եւ Տ.Տ. Խորէն Ա Բարոյեանի վախճանման 50 եւ 30-ամեակների առիթով Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում տեղի ունեցաւ յուշերեկոյ՝ դասախօսական եւ գեղարուեստական յայտագրով:

Միջոցառմանը ներկայ էին՝ հոգեւորականաց դասը, Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինների անդամներ, միութենականներ, հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներ եւ համայնքի անդամներ:

Երեկոն վարեց Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը: Նրա արտասանած բացման խօսքում կարեւորութեամբ ասուած էր. «*Նրանք իրենց ճշմարիտ եւ անձնազոհ հովւապետականի նուիրեալ առաքինութիւններով ոչ միայն տէր կանգնեցին իրենց բանաւոր հօտին, այլեւ հայրենանուէր, եկեղեցաշէն ու բազմարնոյթ ազգօգուտ ծառայութիւններով երաշխաւորեցին տարագիր հայ բեկորների գոյութեան լինելութիւնը եւ հոգեւոր խնամատարութիւն ջամբեցին Սփիւռքի զանազան երկրների ու քաղաքների մէջ հաստատուած դաղթօջախներին*»:

Այնուհետեւ ելոյթ ունեցաւ Թեհրանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգիսեանը: Սրբազան Հայրն իր ելոյթի սկզբում համառօտ եւ պատմական տուեալներով ներկայացրեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ որպէս Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի լծակից եւ գործակից: Ապա անդրադառնալով Տ.Տ. Զարեհ Ա Կաթողիկոսի կենսագրական գծերին, ով Անթիլիասում՝ Կաթողիկոսութեան հաստատուելուց յետոյ եղել է Դպրեվանքի առաջին ուսանողը, ներկայացրեց նրա կեանքից այնպիսի դրուագներ, որոնցով ունկնդիրն առաւել ծանօթացաւ երանաշնորհ Կաթողիկոսի անհատականութեանն ու ազգանուէր ոգուն:

Գերշ. Տ. Սեպուհ արքեպս. Սարգիսեանն իր ելոյթի մէկ այլ հատուածում աւելացրեց. «*Ամէն անգամ երանաշնորհ Տ.Տ. Զարեհ Ա Կաթողիկոսը մեզ յիշեցնում էր, որ մեր Եկեղեցին մէկ է եւ դուք կոչուած էք ծառայելու մէկ եկեղեցու եւ մէկ ժողովրդի*»:

Ապա ելոյթով հանդէս եկաւ Լիբանանի Խորհրդարանի պատգամաւոր Յակոբ Բագրատունին: Նա կարեւորութեամբ նշելով Զարեհ եւ Խորէն վեհափառ հայրապետների միջեւ եղած անքակտելի կապը՝ ասաց. «*Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան*

աթոռի երկու հսկաների վախճանման ամեակների զուգադիպութիւնը կրնայ պատահական ըլլալ, բայց երկու ուխտակից եղբայրներու հաստատած ու ապրած մէկութիւնը՝ երբէ՛ք»:

Այնուհետեւ դասախօսն իր յուշերից ներկայացրեց Տ.Տ. Խորէն Ա Կաթողիկոսի կեանքը եւ նրա շինարար ու ազգանուէր գործունէութիւնը:

Միջոցառումը եզրափակուեց թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի հայրական պատգամով:

Առաջնորդ Սրբազան Հայրը երեկոն յուզիչ համարելով՝ անդրադարձաւ երկու երանաշնորհների անհատականութեանն ու մտածումներին եւ կարեւորութեամբ ընդգծեց. «***Զարեհ եւ Խորէն կաթողիկոսներն ասացին՝ հայ հոգեւորականն այսօր պէտք է իր նկարագրո՛վ յարգանքի արժանի դառնայ եւ այս ոգին փոխանցեցին յաջորդող սերունդներին, ու մենք այդ ոգով պիտի շարունակենք մեր ծառայական կեանքը՝ որպէս Հայաստանեայց Առաքելական մէկ ամբողջական Եկեղեցի***»:

Գերշ. Սրբազան Հայրն իր պատգամի աւարտին մատնանշեց մի քանի օր առաջ, Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսների ներկայութեամբ եւ օրհնութեամբ, շուրջ 600 տարի յետոյ Ս. Էջմիածնում կայացած Եպիսկոպոսաց Ժողովի մասին, այն համարելով մեր Եկեղեցու միութեան եւ միասնականութեան կարեւորագոյն դրսեւորումներից եւ ապացոյցներից մէկը:

Յատկանշելի է, որ յուշերեկոյի ընթացքում իրագործուեցին գեղարուեստական կատարումներ, որոնց շարանում ասմունքներով հանդէս եկան Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի «Կռունկ» ասմունքի խմբի անդամներ Նայիրի Թահմազեանն ու Լեռնիկ Ղազարեանը՝ ղեկավարութեամբ տկն. Ռիմա Սիմոնեանի, իսկ երգերի կատարմամբ ելոյթ ունեցաւ Ս. Ամենափրկիչ Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ Արմէն Ամիրխանեանի խմբավարութեամբ:

ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇՒԵՑ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ ՏՕՆԸ

Երկուշաբթի՝ հոկտեմբերի 21-ի երեկոյեան, Սպահանի Հայոց Թեմի հաւատաւոր հայորդիների ներկայութեամբ, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանքում մեծ շուքով նշուեց Վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցու անուանակոչութեան տօնը, որը միաժամանակ տօնն է Ս. Ամենափրկչեան Վանքի:

Անուանակոչութեան տօնի առիթով Ս. Պատարագ մատուցեց Վանքի եկեղեցում՝ նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի: Օրուայ պատարագիչն ու քարոզիչն էր Յունաստանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Խորէն եպս. Տողրամաճեանը, իսկ երգեցողութիւնը կատարում էր Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արմէն Ամիրխանեանի:

Նախքան օրուայ քարոզը, գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, ողջունելով Տ. Խորէն եպս. Տողրամաճեանի ներկայութիւնը Նոր Ջուղայում, անդրադարձ ունեցաւ վերջնիս ծառայական աշխատանքներին: Սրբազան Հայրն իր խօսքն աւարտեց աղօթելով սիրիահայութեան խաղաղութեան եւ առողջութեան համար:

Այնուհետեւ ներկայ հաւատացեալներին իր հայրական պատգամն ուղղեց պատարագիչ Սրբազան Հայրը: Գերշ. Տ. Խորէն եպս. Տողրամաճեանն իր քարոզն սկսեց անուանի բանաստեղծ Վահան Թեքէյեանի «Եկեղեցին հայկական» բանաստեղծութիւնից մի հատուածի մէջբերմամբ, որին յաջորդեց նրա դրատանքի խօսքը՝ Ս. Ամենափրկիչեան Վանքի եկեղեցին Ս. Յովսէփ Արեմաթացու անուամբ մկրտելու համար: Նա իր քարոզի շարունակութեան մէջ կարեւորութեամբ նշելով, որ ուխտը՝ Աստծու նկատմամբ ունեցած յանձնառութիւնն ու հաւատարմութիւնն է, աւելացրեց, որ երբ ուխտ ենք կատարում՝ որոշում ենք Աստծու դիմաց մաքրուել եւ մեր կարողութեան համաձայն փորձում ենք մի աստիճան եւս բարձրանալ դէպի սրբակենցաղ կեանք:

Սրբազան Հայրն իր խօսքում անդրադառնալով նաեւ հայութեան Հայաստանից արտագաղթին եւ մեր դարաւոր համայնքներից հեռանալուն՝ ասաց. «*Մենք ամէն գնով պէտք է տէր կանգնենք մեր աւանդութեան, հաստատութիւններին, եկեղեցիներին, կառոյցներին ու հայկական օջախներին եւ նոր չունչ, նոր կեանք ու նոր հոգի տանք, որպէսզի երիտասարդանայ մեր ազգը*»: Քարոզի աւարտին Սրբազան Հայրն աւելացրեց. «*Թող ուխտի այս օրը բոլորիս համար դառնայ ինքնասրբագրման եւ մասնակցութեան պահ: Այսօր մենք ամէն մէկ հայի օժանդակութեան, մտքի եւ ներգործութեան կարիքն ունենք: Պէտք է մասնակցութիւն ունենանք եւ հեռու վանենք մեզանից անտարբերութիւնը: Մասնակցութիւն՝ ամենօրեայ մեր կեանքի մէջ, որպէսզի եկեղեցական տօներն իրողապէս իմաստ առնեն եւ Եկեղեցին Հայկական կարողանայ մեզ դէպի երկինք բարձրացնել*»:

Ս. Պատարագի աւարտին տեղի ունեցաւ ջրօրհնէք՝ Ս. Յովսէփ Արեմաթացու աջ-մասունքով եւ ներկայ հաւատացեալներն ստացան օրհնուած ջրից: Ապա Վանքի բակի արեւմտեան բաժնում, զանգակատան կողքին, ուր կան բարերարների եւ հոգեւորականների շիրմաքարեր, կատարուեց հոգեհանգստեան արարողութիւն՝ Ս. Ամենափրկչեան Վանքում ծառայած եկեղեցական ու աշխարհական բոլոր

սպասաւորների ու բարերարների հոգիների խաղաղութեան համար:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, երեկոն շարունակուեց ոգեշնչող գեղարուեստական կատարումներով յագեցած յայտագրով՝ Լեռնիկ Ծատուրեանի հանդիսավարութեամբ:

Սոյն բաժնում ասմունքով հանդէս եկան Մեղրի Կարապետեանը, Նարեգա Սիմոնեանը եւ Արեգա Ծատուրեանը, իսկ երգերի կատարմամբ՝ Նարինէ Խուդաբախշեանը, Թանիա Մինասեանն ու Վանայ Շիրւանեանը:

Տօնախմբութեան շարունակութեան մէջ պարային կատարմամբ ելոյթ ունեցաւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի «Կռունկ» պարախումբը, իսկ երգերի կատարմամբ՝ Շահինշահի «Նարօտ» մանկա-պատանեկան երգչախումբը:

Գեղարուեստական կատարումներն իրականացուել էին ղեկավարութեամբ՝ Շահինշահի «Նարօտ» մանկա-պատանեկան երգչախմբի ղեկավար հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախմբի խմբավար Արմէն Ամիրխանեանի, Ն.Ջ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի ղեկավար դկտ. Սիլւա Ալլահվերդեանի, եւ համագործակցութեամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Մշակութային Միաւորի:

Որպէս օրուայ եզրափակիչ խօսք, ներկաներին իր հայրական օրհնանքը փոխանցեց թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, որտեղ նշելով, որ իւրաքանչիւրն այս երեկոյ պէտք է հպարտանայ իր հաւատով, հայութեամբ, ազգութեամբ, եկեղեցով, համայնքով ու թեմով, շնորհակալութիւն յայտնեց գերշ. Տ. Խորէն եպս. Տողրամաճեանին՝ հոգեպարար արարողութեան մատուցման համար եւ գնահատանքի խօսք ուղղեց տօնի կազմակերպիչ յանձնախմբին ու գեղարուեստական կատարողներին: Այնուհետեւ անդրադառնալով Քրիստոսի պատգամին՝ Աստծու կամքը կատարողների յաւիտենական լինելու մասին, աւելացրեց, որ Աստծու կամքը հնազանդութիւնն է աստուածային օրէնքներին եւ կամքին ու Քրիստոսով մեզ բերուած կեանքին. նա ներկաներին պատգամեց՝ Աստծու կամքը կատարել, հնազանդ լինել, բարի կեանք ապրել ու սիրով լի վերաբերմունք ցոյց տալ միմեանց նկատմամբ:

Սրբազան Հայրն իր խօսքի աւարտին կարեւորեց ուխտի վերանորոգումը Աստծու, եկեղեցու եւ ազգի հետ, ինչպէս նաեւ հաւատի, արժէքների ու սրբութիւնների ամուր պահելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Ուրբաթ՝ սեպտեմբերի 27-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան մարզասրահում, Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի նախաձեռնութեամբ հանդիսութեամբ տօնեց Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 22-րդ տարեդարձը:

Ծրագրին ներկայ էին՝ Ճահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, հոգեւորականաց դասը, Իրանում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Գրիգոր Առաքելեանը, Իրանի Իսլամական Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, ազգային մարմինների ու Հայ Դատի Յանձնախմբի անդամները եւ Նոր Ջուղայի ու Ճահինշահրի հայ համայնքների անդամներ:

Ժողովրդական տօնակատարութիւնը բացուած յայտարարեց Իրանի Իսլամական եւ Հայաստանի Հանրապետութիւնների օրհներգերի յոտնկայս ունկնդրութեամբ: Այնուհետեւ ողջոյնի եւ բացման խօսքով ելոյթ ունեցաւ օրուայ հանդիսավար Արթին Մուրադեանը, որն անդրադառնալով անկախութեան խորհրդին, կարեւորութեամբ նշեց համայն հայութեան, ի մասնաւորի իրանահայութեան կողմից ի նպաստ Հայրենիքի հզօրացման իրագործուող աշխատանքները եւ աւելացրեց. «*Այսօր մենք առաւել համոզուած ենք, որ իրականացնելու ենք մեր վաղեմի նպատակներն ու երազանքները, քանզի հայութիւնը միասնական ուժ է՝ լինի Հայրենիքում, թէ Հայրենիքի սահմաններից դուրս*»:

Հաղորդավարի խօսքին յաջորդեց դեսպան Գրիգոր Առաքելեանի օրուան պատշաճ արտայայտութիւններն ու շնորհաւորանքները: Սկզբում նա կարեւորութեամբ անդրադառնալով անկախութեանը, նշեց, որ մեզ համար անհրաժեշտ է ամուր հիմքերի վրայ կառուցուած կուռ պետականութիւն ունենալը, որպէսզի կարողանանք խրոխտ կեցուածքով

նայենք դէպի ապագայ՝ այն վստահութեամբ, որ ապագան պէտք է լուծում տայ մեր հարցերին եւ արդարութիւնը պէտք է յաղթանակի:

Այնուհետեւ պրն. Առաքելեանը յիշատակեց անկախութեան 22 տարիների ընթացքում դիմագրաւած մարտահարուէրներն ու ձեռքբերումները եւ աւելացնելով, որ Հայաստանի պետութիւնը պետական եւ ազգային շահերը գերադասում է ամէն ինչից, ասաց. «*Շուտով նշելու ենք նաեւ հայ-իրանական յարաբերութիւնների հաստատման 22-րդ տարեդարձը. յարաբերութիւններ, որոնց կարելի է օրինակելի համարել: Իրանն առաջին երկրներից եղաւ, որ Հայաստանի Հանրապետութեան անկախացումից յետոյ, դեսպանատների մակարդակով, դիւանագիտական յարաբերութիւններ ստեղծեց Հայաստանի հետ: Երկու երկրների միջեւ քաղաքական երկխօսութիւնը գտնւում է բարձր մակարդակի վրայ եւ անշուշտ այս հարցում շատ կարեւոր դերակատարութիւն ունի իրանահայ համայնքը, որը մշտապէս կամուրջ է հանդիսացել հայ-իրանական յարաբերութիւնների համար*»:

Ծրագրի շարունակութեան մէջ, ելոյթների շարանում իր պատգամը փոխանցեց նաեւ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը: Նա յիշեցնելով միասնականութեան ուժի եւ զօրութեան մասին՝ ասաց. «*Հայ լինելը հեշտ է, սակայն հայ մնալը, հայ ապրելը եւ Հայաստանի ու հայրենիքի համար գործելը դժւար է: Հայաստանը եւ անկախութիւնը դո՛ւք էք, սիրելի՛ ժողովուրդ: Առանց հայ ժողովրդի՝ Հայաստանն անկախութեան պէտք չունի: Առանց հայ ժողովրդի ներկայութեան, գործելակերպի ու առաքելութեան՝ Հայաստանն ինչո՞ւ պէտք է տօնի իր անկախութիւնը: Հայաստանը սրբութիւն է եւ այդ սրբութեան արժեւորողը ժողովուրդն է*»:

Տօնակատարութեան երկրորդ բաժնում հայրենասիրական եւ ժողովրդական երգերով ու ասմունքով ներկաներին ոգեշնչեցին Հայաստանից հրաւիրուած երգչուհի Ալլա Լեւոնեանը եւ համայնքի տաղանդաւոր երիտասարդուհիներ՝ Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երիտասարդական երգչախմբի մենակատարներ՝ Թանիա Մինասեանը, Վանայ Ճիրուանեանը եւ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան «Կռունկ» ասմունքի խմբի անդամներ՝ Ալինա Տէր Սուքիասեանն ու Մանիա Ղուկասեանը:

Ð²Ú²êî²ÜÚº²Úò ²è²ø ºÈ²Î²Ü êàôð´ Îº Ôº òàô º äÆêÎàäàê²ò ÄàÔà ì

Սեպտեմբերի 24-ից 27-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի նախագահութեամբ գումարուեց Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու Եպիսկոպոսաց Ժողովը, որին մասնակցում էին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 62 արքեպիսկոպոսներ եւ եպիսկոպոսներ:

Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն Եպս. Զարեանն եւս ներկայ էր սոյն ժողովին:

Վեց հարիւր տարի ընդմիջումից յետոյ, Եպիսկոպոսաց այս ժողովն առաջինն էր, որին ներկայ էին՝ Հայ Եկեղեցու ամբողջական եպիսկոպոսաց դասը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եպիսկոպոսները:

Բացման պահին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը ողջունեց ժողովը եւ ընդգծեց, որ Հայոց Եկեղեցու համար պատմութեան մէջ նոր փուլ է բացւում: Նա յաջողութիւն եւ արդիւնաւէտ աշխատանք մաղթեց ժողովին:

Սեպտեմբերի 24-ի նիստերին եպիսկոպոսաց դասը քննարկեց Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցում սրբադասման աւանդութեան վերականգնման հարցը եւ այդ շրջագծում Հայոց Ցեղասպանութեան զոհերի սրբադասման խնդիրը:

Զեկոյցների քննարկման արդիւնքում՝ Հայոց Ցեղասպանութեան զոհերի սրբադասման գործընթացի առնչութեամբ Եպիսկոպոսաց Ժողովը որոշեց.

ա) Որդեգրել Հայոց Ցեղասպանութեան նահատակների հաւաքական սրբադասման սկզբունքը:

բ) Յանձնարարել Սրբադասման Յանձնախմբին՝ շարունակել նահատակների անհատական եւ խմբական սրբադասման ուսումնասիրութիւնը՝ Եպիսկոպոսաց առաջիկայ ժողովներին ներկայացնելու համար:

գ) Յանձնարարել Սրբադասման Յանձնախմբին մշակել սրբադասման կանոնակարգը եւ արարողակարգը՝ Եպիսկոպոսաց առաջիկայ ժողովին ներկայացնելու համար:

Սեպտեմբերի 25-26-ի նիստերին Եպիսկոպոսաց Ժողովի մասնակիցները քննութեան առան Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու առաջին երկու խորհուրդների՝ Ս. Մկրտութեան եւ Դրոշմի առնչութեամբ Ծիսական Յանձնախմբի կողմից կատարուած աշխատանքները:

Համակողմանի քննարկման արդիւնքում՝ ժողովն ընդունեց Ս. Մկրտութեան եւ Դրոշմի խորհուրդների միօրինակ բնագիր: Քննարկման նիւթ դարձան Ս. Մկրտութեան Խորհրդի հետ առնչւող հարցերի ուղեցոյցը եւ Ս. Մկրտութեան Խորհրդի խրատական-ուսուցողական ձեռնարկը, որոնց առնչութեամբ Ծիսական Յանձնախմբին յանձնարարուեց շարունակել լրամշակման աշխատանքները: Կարեւորութեամբ քննարկուեց նաեւ Հայ Եկեղեցու ծիսական լեզուի խնդիրը եւ այլ հարցեր, որոնց վերաբերեալ անհրաժեշտութիւն նկատուեց յաւելեալ ուսումնասիրութիւնների:

Սեպտեմբերի 27-ի նիստերը նուիրուած էին Հայ Եկեղեցու այժմէական մարտահրաւէրներին:

Եպիսկոպոսաց ժողովն արդիւնքների ամփոփման հանգրուանում մտահոգութեամբ անդրադարձաւ նաեւ մեր ժողովրդի ազգային, եկեղեցական կեանքում առկայ հասարակական, տնտեսական, ժողովրդագրական եւ այլ տարաբնոյթ մարտահրաւէրներին ու դժուարութիւններին: Նշեալ մարտահրաւէրներին ու հիմնախնդիրներին ընդառաջ՝ եպիսկոպոսաց դասը, ելնելով Հայ Առաքելական Եկեղեցու ծառայական ոգուց, օրհնութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի, որոշեց հաստատել հիմնադրամ՝ Հայաստանի ու Արցախի եւ սիրիահայութեան կարիքաւոր զաւակներին աջակցութիւն ցուցաբերելու համար: Հիմնադրամի գործունէութեան մեկնարկի համար հաստատուեց երկու միլիոն ԱՄՆ դոլարի նախնական դրամագլուխ, իսկ հիմնադրամի ընթացիկ աշխատանքների կազմակերպման համար ստեղծուեց յատուկ յանձնախումբ:

Որոշուեց Եպիսկոպոսաց յաջորդ ժողովը գումարել 2014 թւականի աշնանը:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՇԱԲԱԹԻԱՅ ԱՌԹԻՒ

Ուրբաթ՝ սեպտեմբերի 27-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Ս. Յովհաննու եկեղեցում, սրբազան պաշտպանութեան շաբաթուայ առթիւ տեղի ունեցաւ Հոգեհանգստեան արարողութիւն՝ պատերազմի տարիներում Իրանի հողային ամբողջականութեան ճամբին իրենց կեանքը նուիրաբերած նահատակների հոգիների խաղաղութեան համար:

Սպահանի Հայոց Թեմի ազգային մարմինների նախաձեռնութեամբ կազմակերպուած այս արարողութիւնը մատուցեց Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ, որին ներկայ էին նաեւ հոգեւորականաց դասը, Իրանի Իսլամական Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր պրն. Ռոբերտ Բեգլարեանը, ազգային մարմինների եւ շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչները, հայ նահատակների հարազատները, «Քանանեան» աղջ. դպրոցի աշակերտութեան ներկայացուցիչները՝ ընկերակցութեամբ իրենց պատասխանատուների եւ հաւատացեալ ժողովուրդ:

Հոգեհանգստեան պաշտօնի ընթացքում յիշուեցին Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի նահատակները, ի մասնաւորի Թեմիս նահատակուած զաւակների անունները, որոնց լուսանկարները տեղադրուել էին եկեղեցու խորանի առջեւ:

Արարողութեան աւարտին հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանն անդրադառնալով Իրան-Իրաք պարտադրեալ պատերազմի ընթացքում զոհուած նահատակներին՝ ասաց. «*Նրանք մահն արհամարհելով՝ իրենց պարտքը մատուցեցին՝ երկրի հողային ամբողջականութեան համար: Նրանցից իւրաքանչիւրի սխրագործութիւնը պէտք է դառնայ մեզ առաջնորդող ուղին*»:

Պատգամի վերջում հոգշ. Հայր Սուրբն իր, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի, ազգային մարմինների, պրն. Ռոբերտ Բեգլարեանի ու շրջանի Հայ Դատի Յանձնախմբի անունից ցաւակցական խօսք ուղղեց հայ նահատակների հարազատներին:

Ð²Ü¶Æêî ª 47 î²ðÆ´ºÔàôÜ Ðà¶ºôàð Ì²è²ÚàôÂÆôÜÆò Úºî àÚ

2013 թւականի սեպտեմբերի 8-ին, Կիրակի օր, նախագահութեամբ Սպահանի Հայոց Թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի, հերթական սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Նոր Ջուղայի Ս. Մինաս եկեղեցում:

Եկեղեցին մարդաշատ էր: Ներկայ էին նաեւ հոգեւորականաց դասը, Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհրդի, Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան եւ Ս. Մինաս Եկեղեցու երէցփոխութեան անդամները: Հաւատաւոր հայորդիները Ս. Պատարագին մասնակցելուց բացի, ներկայացել էին օրուայ պատարագիչ արժն. Տ. Վաղինակ աւ. քհնյ. Շահիջանեանի, իբրեւ ծխատէր քահանայի, պաշտօնական վերջին արարողութեան օրհնութիւնը վայելելու:

Առաջնորդ Սրբազան Հօր եւ Սպահանի Հայոց Թեմի Կրօնական Խորհրդի որոշմամբ, Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան հետ համախորհուրդ եւ արժանապատիւ Տէր Հօր համաձայնութեամբ, 47 երկար տարիների հաւատարմութեամբ ծառայութիւնից յետոյ հանգստեան կոչուեց արժն. Տ. Վաղինակ աւ. քհնյ. Շահիջանեանը:

Ս. Պատարագի քարոզի պահին, առաջնորդ Սրբազան Հայրը, բնաբան ունենալով օրուայ աւետարանական ընթերցանութեան հատուածից առնուած Քրիստոսի հրաշագործութիւններից մէկը, որտեղ մեր Տէրը միայն «Բացի՛ր» հրամայականով լսողութիւն պարգեւեց խուլ մի անձի, իր համոզումը յայտնեց առ այն, որ քա-

հանգիստական ձեռնադրութիւն ստանալով, արժն. Տէր Հայրը նոյն կերպով արժանացել է քրիստոսապարգեւ շնորհքի՝ իր միտքն ու լեզուն բացուելով՝ աւետարանի խօսքի քարոզչութիւնը կատարելու համար: Թեմական առաջնորդն ամփոփ գծերով անդրադառնալով արժն. Տէր Հօր կենսագրականին եւ յատկապէս նրա հոգեւորական կեանքին, եզրակացրեց, որ նա իր ծառայական տարիներն անց է կացրել ամենայն խոնարհութեամբ եւ Հայոց Եկեղեցու դաւանանքի ու ծէսի նկատմամբ բծախնդրութեամբ եւ հաւատարմութեամբ, որով բարձր գնահատեց արժն. Տէր Հօր նիւրումը եւ նրան արժանի համարեց պատուով եւ արժանաւորութեամբ հանգստի կոչելու:

Առաջնորդ Սրբազան Հօր խօսքերից յետոյ արտայայտուեց արժն. Տ. Վաղինակ աւ. քհնյ. Շահիջանեանը՝ երախտագիտութեան խօսքեր ուղղելով Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նիւրապետութեանը եւ անցեալում պաշտօնավարած ու ներկայում ծառայող բոլոր հոգեւորականութեանը՝ ովքեր նեցուկ են հանդիսացել իրեն՝ իր ծառայական կեանքի ամբողջ ասպարէզում: Արժն. Տէր Հայրը շնորհակալական խօսք ուղղեց Թեմի եկեղեցական մարմինների եւ իր ծուխի եկեղեցիներում աշխատած բոլոր կազմերի անդամներին, երէցփոխներին, երգեցիկ խմբերին, սարկաւագներին եւ համայն ժողովրդին, ովքեր միշտ լինելով իր կողքին՝ քաջալերել եւ խրախուսել են նրան:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, եկեղեցու սրահում, Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեան միջոցով կազմակերպել էր պատշաճ ծրագիր:

Եկեղեցեաց Վարչութեան նախագահ պրն. Ղուկաս Ծատուրեանը, իբրեւ օրուայ սեղանավար, հերթաբար հրաւիրեց Ս. Մինաս եկեղեցու երէցփոխութեան, Եկեղեցեաց Վարչութեան, հոգեւորականաց դասի եւ Կրօնական Խորհրդի ներկայացուցիչներին՝ արտայայտելու, ովքեր իրենց սրտի խօսքն ու բարեմաղթութիւններն ուղղեցին հանգստի կոչուած Տէր Հօրը՝ բարձր գնահատելով նրա մօտ կէս դար հոգեւորական կեանքի նուիրական ծառայութիւնը եւ իրենց երախտագիտութիւնը յայտնեցին նրան: Արտայայտուողները չմոռացան իրենց գնահատանքը յայտնելու արժն. Տէր Հօր երէցկնոջը նաեւ 15 տարի եկեղեցուն ծառայած եւ Տէր Հօր կողքին եղած տիրացուին, որոնց շնորհիւ նա կարողացել է դիմակայել զանազան դժուարութիւններ եւ յաջող աւարտի հասցնել իր կոչումը:

Եկեղեցեաց Վարչութեան կողմից արժն. Տ. Վաղինակ աւ. քհնյ. Շահիջանեանի համար պատրաստուել էր մի գեղեցիկ յուշանուէր, որը առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ յանձնուեց նրան: Նուէրով գնահատուեց նաեւ տիրացու Առաքել Խուդավերդեանը:

Վերջում արտայայտուեց եւ իր օրհնութիւնը փոխանցեց գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Տէր Հօրը մաղթելով երկար կեանք, խաղաղ եւ ուրախ օրեր իր ընտանեկան ջերմ յարկի տակ: Սրբազան Հայրը յատուկ կերպով շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն կազմերին եւ անձանց, ովքեր օժանդակել են արժն. Տէր Հօրը՝ Սանգիբարանում, Խուզիստանում եւ Նոր Ջուղայում իր ծառայական աշխատանքը լաւապէս կատարելու համար:

Գնահատման ծրագրի վերջին բաժինն եղաւ արժն. Տէր Հօր պատուին նրա թոռան՝ Մհեր Պողոսեանի միջոցով «Հայաստան», ապա բոլոր ներկաների միջոցով յոտնկայս «Կիլիկիա» երգերի կատարումները:

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ԳԷՈՐԳ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ս. Գէորգ Զօրավարի տօնի առթիւ Նոր Ջուղայի համանուն եկեղեցում կատարուեց երկօրեայ արարողութիւն՝ ուրբաթ եւ շաբաթ սեպտեմբերի 27 եւ 28-ին՝ հաւատացեալ ժողովրդի մասնակցութեամբ:

Տօնի նախօրէին՝ ուրբաթ կէսօրից յետոյ ժամը 3-ին, Ս. Գէորգ եկեղեցում, Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ եւ հոգեւորականաց դասի մասնակցութեամբ, տեղի ունեցաւ Աղօրհնէք եւ ոչխարների զենում, իսկ երեկոյեան ժամը 6-ին՝ Հսկումի արարողութիւն:

Շաբաթ, սեպտեմբերի 28-ին, Ս. Գէորգ Զօրավարի տօնի օրը, որը նաեւ Նոր Ջուղայի Ս. Գէորգ եկեղեցու անուանակոչութեան տօնն է, առաւօտեան Ս. Պատարագ մատուցեց ձեռամբ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի, մասնակցութեամբ քահանայից եւ դպրաց դասերի: Երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը:

Պատարագի ընթացքում յաւուր պատշաճի քարոզեց պատարագիչ Հայր Սուրբը: Նա սկզբում անդրադառնալով սուրբերի դերակատարութեանը մեզանից իւրաքանչիւրի կեանքում՝ ասաց. «*Նրանք մեր կեանքում մնայուն եւ ամենօրեայ դերակատարութիւն ունեն, որովհետեւ մարդ արարածն ինչքան էլ կարողանայ մօտիկ լինել Աստծուն, խօսել եւ յարաբերութեան մէջ մտնել Տիրոջ ու երկնքի հրեշտակների հետ, կը մնայ նոյն այն մեղաւոր մարդը, որը կամայ թէ ակամայ մեղքի մէջ է ընկնում. դրա համար են բարեխօս սուրբերը, ովքեր Տիրոջ սեղանի առաջ գնալով՝ բարեխօսում են մեր մեղքի համար եւ թողութիւն խնդրում: Ահա այս պատճառով է, որ սուրբերը կարեւոր են մեր կեանքում*»:

Այնուհետեւ Հայր Սուրբն իր պատգամի շարունակութեան մէջ յիշելով Ս. Գէորգ Զօրավարին՝ նշեց, որ նա մեր մտքերում դրոշմուել է որպէս բարեխօս, հոգու զօրութիւն ունեցող ու վստահելի սուրբ, եւ աւելացնելով, որ ներկայ պայմաններում մարդիկ առաւել կարիք ունեն սուրբերի բարեխօսութեանը՝ յորդորեց նրանց շատացնել իրենց ներկայութիւնը եկեղեցիներում: Նա վերջում իր եւ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի անունից շնորհաւորեց տօնի կապակցութեամբ եւ գնահատանքի խօսք ուղղեց Նոր Ջուղայի Հայոց Առաքելական Եկեղեցեաց Վարչութեանն ու բոլոր դերակատար յանձնախմբերին եւ անհատներին՝ տօնին առնչուող ծրագրերի լաւագոյն կազմակերպման համար:

Ս. Պատարագի աւարտին Հայր Սուրբը հոգեւորականաց դասի մասնակցութեամբ, Ս. Գէորգ Զօրավարի աջի օրհնութեամբ կատարեց Զրօրհնէքի արարողութիւն, որից յետոյ ներկայ հաւատացեալներն ստացան օրհնուած ջրից:

Այնուհետեւ եկեղեցու բակում տեղի ունեցաւ Մատաղօրհնէքի արարողութիւնը եւ Մատաղի Յանձնախմբի միջոցով պատրաստուած հարիսան բաժանուեց ժողովրդին:

Յատկանշական է, որ ուխտաւոր ներկաներից ոմանք տարիների աւանդութեան համաձայն տօնին նախորդող գիշերները գիշերել էին եկեղեցու բակում, իսկ ոմանք էլ իրենց խորհուրդը կատարել էին նիւթական նուիրատուութեամբ եւ մատաղացուներ նուիրելով:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՆԸ՝ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔՈՒՄ

Շաբաթ՝ հոկտեմբերի 12-ի առաւօտեան, Ս. Թարգմանչաց տօնի առիթով, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանքի Ս. Յովսէփ Արեմաթացի եկեղեցում, Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի նախագահութեամբ, մատուցեց հանդիսաւոր Ս. Պատարագ: Օրուայ պատարագիչն էր արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը, իսկ արարողութեանը մասնակցում էին նաեւ հոգեւորականաց դասն ու Ս. Ամենափրկչեան Վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ խմբավար Արմէն Ամիրխանեանի ղեկավարութեամբ:

Եկեղեցում ներկայ էին Թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները, «Արմէն» դպրոցի հինգերորդ եւ վեցերորդ դասարանների եւ «Քանանեան» աղջկանց ու «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների աշակերտութիւնն ու պատասխանատուները եւ հաւատաւոր ժողովուրդ:

Ս. Պատարագից յետոյ ներկաները հաւաքեցին Ս. Ամենափրկչեան Վանքի «Խաչատուր Կեսարացու» անուան թանգարանի մուտքի մօտ, ուր իրականացուեց աշակերտական գեղարուեստական ծրագիր՝ հաղորդավարութեամբ Ս.Ա. Վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» անուան գրադարանի գրադարանավար օրդ. Վերգինէ Միրզախանեանի:

Սոյն բաժնի մեկնարկը տրուեց Նոր Ջուղայի Հայոց Ազգային Նախակրթարանի փոքրիկ սաների երգով ու արտասանութեամբ՝ այբբենարանի, հայոց լեզուի եւ Մեսրոպ Մաշտոցի մասին: Այնուհետեւ «Արմէն» տարրական դպրոցից Սուրէն Մուրադեանի «Մայրենի լեզու» բանաստեղծութեան ասմունքով ելոյթ ունեցան Լիլիթ Գէորգեանը եւ Վահագն Թահմազեանը, իսկ օրուան պատշաճ աշակերտական խօսքերով հանդէս եկան՝ Մինելի Ղազարեանը, Արսիս Ղեւոնդեանը, Արսիս Յովհաննիսեանը, Սէրլի Մկրտչեանն ու Տաթեւիկ Տէր-Մարտիրոսեանը: Ընթացքում հնչեց «Իմ Հայ Լեզու» երգը՝ դպրոցի բոլոր աշակերտների ձայնակցութեամբ: Վերջում «Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոցների կողմից նախ Արութին Ղեւոնդեանն ընթերցեց Աւետիս Ահարոնեանի «Հայոց Լեզու»-ն, որից յետոյ Անդրիա Խաչատրեանն ասմունքեց Թաթուլ Բոլորչեանի «Զօրաւոր կանչը», Միրօ Ղազարեանը՝ Սոկրատ Խանեանի «Մաշտոցն Արցախում»-ը եւ Նազէ Ասատրեանը՝ Վարանդի Նեմեզիդաից մի հատուած:

Ծրագրի վերջում գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանն իր հայրական պատգամը փոխանցեց աշակերտութեանը՝ ասելով. «*Այսօր արձակ են հայոց դպրոցները եւ արձակ են դասարանները, սակայն դուք եկել էք ամենից մեծ դասարանը, որպէսզի աղօթէք մեր սուրբ վարդապետների հոգիների խաղաղութեան համար, քանի որ մենք նրանց չնորհիւ է, որ ունենք ամբողջական գիր ու գրականութիւն։ Ս. Մաշտոցն իր աշակերտներին եւ ժողովրդին փոխանցեց այն ամբողջական լոյսը, որը յաւերժական է*»: Իր խօսքերի աւարտին Սրբազան Հայրը շնորհաւորելով հայ ուսուցչի տօնը՝ աշակերտներին պատգամեց.- «*Հպարտ եղէք, որ հայ էք եւ խօսում էք հայերէն։ Որպէս հայ ժողովրդի սերունդ՝ լա՛ւ սովորէք եւ անաղա՛րտ պահէք հայոց լեզուն*»:

Վերջում «Քանանեան» եւ «Կատարինեան» զոյգ դպրոցների աշակերտութիւնը միախմբուելով «Քանանեան» դպրոցի հիմնադիր Վարվառէ Քանանեանի շիրմի շուրջ, որը գտնուում է Ս.Ա. Վանքի բակում, իրենց յարգանքի տուրքը մատուցեցին մեծ բարերարին:

ԳԵՐՄԱՆԱՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ

Կիրակի՝ 2013 թւականի հոկտեմբերի 13-ին, Ս. Ամենափրկչեան Վանք այցելեցին Գերմանիայից ժամանած ուսուցիչների 21 հոգանոց մի խումբ, որը հանդիպում ունեցաւ Սպահանի Հայոց Թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի հետ: Հանդիպումը կայացաւ Ս. Ամենափրկչեան Վանքի Ծաղկեայ Դահլիճում, որտեղ առաջնորդ Սրբազան Հայրը ողջոյնի եւ բարի-գալստեան խօսքից յետոյ ընդհանուր եւ համապարփակ կերպով բացատրեց Իրանում եւ մասնաւորաբար Սպահանի Հայոց Թեմում ապրող հայ համայնքների կացութեան եւ կարգավիճակի մասին: Հակիրճ կերպով անդրադառնալով հայերի Իրանում հաստատուելու եւ անցեալ 400 տարիներում գոյատեւելու պատմութեանը, թեմական առաջնորդը նաեւ խօսեց հայութեան իրաւունքների եւ առանձնաշնորհումների մասին. նա յատուկ կերպով շեշտեց, որ սահմանադրական օրէնքով ամրագրուած եւ Իսլամական Խորհրդարանում երկու հայ պատգամաւորների միջոցով իրագործուող աշխատանքների հիման վրայ, հայ համայնքի անդամներն Իրանում ապրում են իբրեւ լիարժէք քաղաքացիներ, ովքեր իրենց պարտաւորութիւններն ու պարտականութիւնները կատարում են լաւապէս եւ ամենայն բծախնդրութեամբ:

Գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը միաժամանակ իր ուրախութիւնը յայտնեց առ այն, որ Ս. Ամենափրկչեան Վանք են այցելում ներկայ պատուիրակութեան անդամների պէս գիտակից անձինք, ովքեր կարող են հարազատ թարգմանը եւ հաւատարիմ դեսպանը հանդիսանալ Իրանում ապրող փոքրամասնութիւնների իրական վիճակի, որն այլափոխուած եւ երբեմն հակառակ կերպով է ծանուցւում աշխարհին:

Այցելուներն իրենց հետաքրքրող հարցումներն ուղղեցին առաջնորդ Սրբազան Հօրը՝ հայ համայնքների հասարակական, մշակութային, կրթական, կրօնական խնդիրների եւ յատկապէս ոչ-հայ շրջապատի հետ յարաբերութեան վերաբերեալ, ու ստացան համապատասխան եւ համոզիչ պատասխաններ:

Հանդիպման աւարտին խումբը յիշատակի համար գերշ. Սրբազան Հօր հետ լուսանկարուեց Ս.Ա. Վանքի բակում եւ հրաժեշտ տուեց նրան:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ ԲՆՉԵԹ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԲԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Երկուշաբթի, սեպտեմբերի 23-ի առաւօտեան, հանդիսաւոր արարողութեամբ հնչեց դպրոցական տարեմուտի առաջին զանգը՝ Նոր Ջուղայի հայոց ազգային դպրոցներում, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ, որին ընկերակցում էին Թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները:

Սկզբում Ն.Ջ. Հայոց Ազգային Կրթահամալիրի բակում, ուր համախմբուել էին «Արմէն» տարրական եւ «Կատարինեան» տղայոց ու «Քանանեան» աղջկաց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների աշակերտները, տեսչութիւնները, ուսուցչական կազմերը, Ծնողական խորհուրդներն ու ծնողները, ողջոյնի եւ բացման խօսքով ելոյթ ունեցաւ «Արմէն» տարրական դպրոցի տեսուչ Վրէժ Շիրուանեանը: Նա շնորհաւորելով դպրոցական վերամուտի եւ Սրբազան պաշտպանութեան շաբաթայ առթիւ՝ կարեւորութեամբ անդրադարձաւ Սփիւռքի հայոց դպրոցների գլխաւոր առաքելութեանը՝ նոր սերնդի հայկական դիմագծի ու ազգային նկարագրի կերտմա-

նը եւ աւելացրեց. «*Այդ առաքելութեան իրագործումը յաճախ պահանջում է եթէ ոչ գերմարդկային, գոնէ լարւած ճիգեր, առաւել ներդրում եւ առաւել պատասխանատուութիւն. պատասխանատուութիւն, որն ընկած է իւրաքանչիւրիս ուսին՝ սկսած աշակերտներից մինչեւ ազգային առաջնորդարան*»:

Արտայայտութիւնների շարանում ելոյթ ունեցան նաեւ «Քանանեան» դպրոցի տեսչուհի տկն. Սալառիֆառն ու «Կատարինեան» դպրոցի տեսուչ պրն. Ադիբին, որոնք նոյնպէս շնորհաւորելով առիթի կապակցութեամբ՝ յաջողութիւն մաղթեցին աշակերտութեանը եւ նրանց յորդորեցին առաւել ջանասիրութեամբ լծուել ուսման աշխատանքի: Ծրագրում ընթերցուեցին նաեւ դպրոցների աշակերտական խօսքերը. «Արմէն» տարրականից՝ Արգիշտի Ղարիբեանի, «Քանանեան» դպրոցից՝ Վանայ Շիրւանեանի եւ «Կատարինեան» դպրոցից՝ Ռաֆֆի Դիլանչեանի միջոցով:

Միջոցառման շարունակութեան մէջ ներկաներն ունկնդրեցին Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի պատգամը, որը հայերէն եւ պարսկերէն լեզուներով արտայայտեց փոխ-ատենապետ պրն. Արթին Քեշիշեանը: Նա շնորհաւորելով դպրոցական վերամուտի առթիւ, սկզբում խօսքն ուղղեց աշակերտութեանը՝ յորդորելով նրանց աշխատասէր լինել, այնուհետեւ գնահատելով տեսչութեան եւ ուսուցիչների անխնայողաբար ու զոհաբերութեամբ յագեցած առաքելութիւնը՝ ասաց. «*Ձեր մարգարէական աշխատանքով կրթութեան հետ միաժամանակ երեխաներին պէտք է գինէք ազգային արժէքներով, որպէսզի մեր հասարակութեանը նւիրէք կիրթ եւ ազգանւէր սերունդներ*»: Կրթական Խորհրդի ներկայացուցիչն իր խօսքի աւարտին կարեւորելով Ծնողական խորհուրդների եւ ծնողների դերակատարութիւնը՝ ցանկացաւ, որ նրանք աչալուրջ մօտեցում ցուցաբերեն դպրոցների կրթական ծրագրերի կապակցութեամբ եւ վերահասու լինեն աշակերտների բարոյա-հոգեբանական խնդիրներին:

Որպէս օրւայ եզրափակիչ խօսք բոլորը վայելեցին հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի օրհնանքը: Նա հայ աշակերտի երեք կարեւոր առաքելութիւնը՝ արթուն միտք, ազնիւ հոգի եւ աշխոյժ մարմին համարելով՝ մաղթեց, որ ընթացիկ ուսումնական տարեշրջանը բոլորի համար լինի վերանորոգման եւ բարեզարդման տարի: Հայր Սուրբն իր խօսքի աւարտին իր եւ թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի անունից ողջունելով առիթի կապակցութեամբ՝ աղօթեց առ Աստուած, որ ուժ, կորով եւ համբերութիւն շնորհի բոլորին, որպէսզի նոր ուսումնական տարեշրջանում կարողանան լիցքաւորել եւ բարեզարդել հոգիներն ու մտքերը՝ հայերէն խօսելով, հայերէն սովորելով, հայավարի ապրելով եւ յատկապէս միմեանց հանդէպ յարգանք եւ սէր ունենալով:

Վերջում «Տէրունական Աղօթք»-ից յետոյ՝ ուսումնական տարեշրջանի առաջին զանգը հնչեց՝ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ձեռամբ եւ աշակերտութիւնը նոր եռանդով ու խանդավառութեամբ տոգորւած շտապեց դէպի դասարանները:

Շարունակութիւնը՝ 21-րդ էջում

Ü.æ. Ð²Úàò ²¼¶²ÚÆÜ ÎðÂ²Ð²Ø²ÈÆðÀ Ð²Ø²Èðôºò âàðê Üàð²Î²èàÚò ¸²ê²ð²ÜÜºðàì

Նոր Ջուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի շինութիւնը համալրելու նպատակով՝ Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհուրդը ձեռնարկեց նոր դասարանների կառուցման աշխատանքին, որը մեկնարկեց 2013 թւականի յունիսի վերջերին եւ աւարտուեց օրեր առաջ: Սոյն դասարանները կառուցուել են Ն.Ջ. Հայոց Ազգային Կրթահամալիրի հիւսիսային բակի արեւելեան բաց տարածքում, որի արդիւնքում հիմնուել է երկյարկանի ու արդիական շէնք:

Նորակառոյց դասարանների պաշտօնական բացումը տեղի ունեցաւ երեքշաբթի՝ հոկտեմբերի 8-ի առաւօտեան ժամը 8-ին, ձեռամբ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի, Թեմական եւ Կրթական խորհուրդների ատենապետերի:

Բացման արարողութեանը ներկայ էին՝ ազգային մարմինների ներկայացուցիչներ եւ «Արմէն» տարրական բաժնի պատասխանատուներն ու աշակերտները:

Արարողութեան ընթացքում նախ արտայայտուեց «Արմէն» տարրական դպրոցի տեսուչ Վրէժ Շիրուանեանը, որն ամփոփ անդրադարձ ունենալով սոյն նախագծի կազմելու եւ իրագործման ընթացքին՝ տեսչութեան անունից շնորհակալութիւն յայտնեց ազգային իշխանութեանը՝ նման հնարաւորութիւն ստեղծելու համար: Այնուհետեւ ներկաներին իր խօսքն ուղղեց Թեմական Խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանը: Նա գնահատելով նախագծի պատասխանատուին եւ շինարարական կազմին՝ կատարած աշխատանքների եւ կարճ ժամանակահատուածում երկյարկանի շինութիւնը լաւապէս կառուցելու համար, մաղթեց, որ նմանօրինակ հնարաւորութիւնների ստեղծումը կը նպաստի կրթութեան որակի բարձրացմանը եւ յոդորեց ներկայ աշակերտներին՝ իրենց աշխատանքը բազմապատկելու՝ կրթութեան մակարդակի բարելաւման ուղղութեամբ:

Բացման արարողութեան աւարտին իր հայրական պատգամը փոխանցեց առաջնորդ Սրբազան Հայրը: Նա գնահատանքի խօսք ուղղելով ազգային մարմիններին ու նախագծի պատասխանատուներին՝ կարեւորութեամբ ընդգծեց, որ Թեմի ազգային իշխանութիւնը ցանկանում է աշակերտութիւնը լաւ պայմաններում կրթի, հայեցի դաստիարակութիւն ստանայ եւ առողջ սերունդ դառնայ: Վերջում թեմական առաջնորդն օրհնեց նորակառոյց շինութիւնը:

Յատկանշական է, որ սոյն արարողութիւնից յետոյ, գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանն այցելելով տարրական բաժնի առաջին դասարաններ՝ աշակերտութեանը տրամադրեց գունազարդ կրօնի դասագրքեր: Սրբազան Հայրն այցելեց նաեւ «Արմէն» տարրական, «Քանանեան» եւ «Կատարինեան» ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների դասարաններ՝ մօտկից աշակերտութեան ուսման իրավիճակին ծանօթանալու նպատակով:

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՊԱՏՄԱԲԱՆ ԺԱԿ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՀԵՏ

Հինգշաբթի՝ հոկտեմբերի 17-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի կենտրոնական դահլիճում տեղի ունեցաւ հանդիպում Հայաստանից ժամանած Երեւանի Պետական Համալսարանի միջազգային յարաբերութիւնների ֆակուլտետի դեկանի տեղակալ Ժակ Մանուկեանի ու Նոր Ջուղայի հայոց ազգային դպրոցների տեսչութիւնների եւ ուսուցչական կազմերի միջեւ: Հանդիպմանը ներկայ էին նաեւ Կրթական Խորհրդի ներկայացուցիչներ՝ տկն. Սաթենիկ Աւետումեանն ու օրդ. Վարդուհի Յովսէփեանը:

Սկզբում Հայոց Ազգային Մանկապարտէզ եւ Նախակրթարանի տեսչուհի Քառոլին Դիլանչեանը ներկայացնելով Ժակ Մանուկեանին՝ նրան հրաւիրեց արտայայտուելու օրւայ թեմայի՝ «Հայոց Պատմութեան դասաւանդման մեթոդիկայ»-ի մասին:

Պրն. Մանուկեանը դրւատանքի խօսք ասելով Նոր Ջուղայի հայ ուսուցիչներին իրենց նւիրումի եւ ջանասիրաբար աշխատանքի կապակցութեամբ՝ կարեւորութեամբ անդրադարձաւ. «*Երբ ես սահմանամերձ գօրամասերում եմ, ասում եմ որ, եթէ Ադրբեջանն ունի նաւթ կամ գազ, եւ դա է նրա հարստութիւնը, ապա մեր հարստութիւնը մեր գինւորն է, որովհետեւ նա է պահում սահմանը եւ նրա շնորհիւ է, որ մենք կարողանում ենք խաղաղ լուսաբացներ դիմաւորել։ Իսկ Սփիւռքում մեր գինւորները, դուք էք սիրելի ուսուցիչներ։ Դուք ձեր ամենօրեայ աշխատանքով օգնում էք երեխային հայ մնալ եւ չձուլւել հայի տեսակից*»: Այնուհետեւ Ժակ Մանուկեանը գնահատելով Նոր Ջուղայի հայոց ազգային դպրոցների աշակերտութեան գիտութեան եւ իմացութեան բարձր մակարդակը՝ անդրադարձաւ բուն թեմային՝ կարեւորելով նաեւ ուսուցչի մեծ դերը աշակերտութեան մէջ Հայոց Պատմութեան նկատմամբ սէր եւ հպարտութիւն առաջացնելու գործում:

Հայոց Պատմութեան դասաւանդման մեթոդիկայի կապակցութեամբ օգտակար բացատրութիւններից եւ խորհուրդներից յետոյ, երեկոն շարունակւեց հարց ու պատասխանի ձեւով եւ ուսուցիչներն ստացան իրենց յուզող հարցերի պատասխանները:

Վերջում Կրթական եւ Տնօրէնների խորհուրդների անունից Ժակ Մանուկեանին նւիրւեց «Նոր Ջուղայի պատմութիւն» գիրքը:

Հարկ է նշել, որ կիրակի՝ հոկտեմբերի 20-ի առաւօտեան, «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց ուղեցոյց եւ միջնակարգ դպրոցների աշակերտութիւնը հանդիպում ունեցաւ Ժակ Մանուկեանի հետ՝ «Ինչո՞ւ Հայոց Պատմութիւն պէտք է սովորենք» թեմայով, որը նոյնպէս ուսուցողական լինելով՝ մեծ բաւականութիւն առաջացրեց աշակերտների մօտ:

Ð²Ú àôêàôòâÆ Ø°Ì²ðØ²Ü °ð°ÎàÚ Üàð æàôÔ²ÚàôØ

Ես եկել եմ այցի եւ թող ձեռքդ յոգնած
Համբուրեմ որդու պէս անձնուէր,
Եւ ասեմ, որ կեանքում բոլոր լուսէ մարդկանց
Ուսուցիչ անունն են միշտ տուել։

Այս տողերով մեկնարկեց հայ ուսուցչի մեծրաման երեկոն, որը տեղի ունեցաւ չորեքշաբթի՝ հոկտեմբերի 30-ի երեկոյեան, Նոր Զուղայի Հայոց Ազգային Կրթահամալիրի «Ալենուշ Տէրեան» սրահում, նախաձեռնութեամբ Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի:

Նոր Զուղայի ու Շահինշահրի հայոց դպրոցների՝ հանգստի կոչուած եւ աշխատող հայ տեսուչներից եւ ուսուցիչներից բացի՝ միջոցառմանը ներկայ էին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, արժն. Տ. Խաչատուր քհնյ. Զարարեանը, ազգային մարմինների ներկայացուցիչներ եւ Սպահանի Պետական Համալսարանի հայոց լեզուի ու գրականութեան ամբիոնի դասախօսներ:

Սկզբում օրուայ հանդիսավար ուսուցչուհի Սօսէ Պօղոսեանը երեկոյի բացման խօսքում անդրադառնալով առաջին հայ ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցին՝ ասաց. «*Այր մի, որ մեր ժողովրդի քաղաքակրթութեան պատմութեան ոսկեդարում իր գործով ու անւամբ յաւիտեանս լոյսով ու հերոսականութեամբ պսակադրեց հայ ուսուցչի անունը բոլոր սերունդների գիտակցութեան մէջ*»:

Բացման խօսքին յաջորդեցին Կրթական Խորհրդի ատենապետ դկտ. Վաչիկ Հայրապետեանի արտայայտութիւնները, որտեղ նա ուսուցչի տօնը մեծ խորհուրդ եւ իմաստ պարունակող իրադարձութիւն համարելով, կարեւորութեամբ մատնանշեց նրա նուիրական աշխատանքը եւ ընդգծեց. «*Մեր ազգային ինքնութեանն սպառնացող տարբեր երեւոյթների դիմագրաւման ճամբին, երեխաների ներշնչման եւ զօրեղացման աղբիւրն է ուսուցիչը եւ նրա սիրոյ, գուրգուրանքի ու խորհուրդների չնորհիւ է, որ մեր զաւակները զերծ են մնում կեղծ իդէալներ փնտրելուց*»:

Կրթական Խորհրդի ատենապետն իր խօսքի աւարտին երախտագիտութեամբ յիշեց անցնող տարուայ ընթացքում իրենց մահկանացուն կնքած ուսուցիչ-

ներ Լեւոն Մինասեանին եւ դկտ. Մեսրոպ Բալայեանին՝ կարեւորութեամբ նշելով, որ նրանք ոչ միայն իրենց աշխատանքի մեծ վարպետն են եղել, այլեւ տասնամեակներ շարունակ իրենց զոհաբերութեամբ ու նուիրումով ծառայել են հայ մշակոյթին՝ միշտ նուիրուած մնալով հայ ժողովրդին ու հայրենիքին:

Այնուհետեւ բեմը տրամադրուեց «Արփա» նուագախմբի երաժիշտներին եւ մեներգիչներին, ովքեր յիշարժան տօնն առաւել զարդարեցին՝ հայերէն երգերի կատարումներով:

Գեղարուեստական բաժնից յետոյ, օրուան պատշաճ խօսքով հանդէս եկաւ Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանը: Նա տօնը հոգեհարազատ անուանելով՝ մատնանշեց հայ ուսուցչի առաքելութիւնը աշակերտներին կրթելու եւ ազգային դաստիարակութիւն տալու առումով եւ ասաց. «*Կրթութիւնը համամարդկային արժէք է, սակայն դաստիարակութիւնը նկարագիր է բնորոշում: Դաստիարակութիւնն ազգային է եւ պատկանում է սեփական ժողովրդին, եւ կրթադաստիարակութեան կարեւոր գործն առաջին հերթին վերապահւած է մեր ուսուցիչներին*»:

Պրն. Մինասեանը մեծարման երեկոն իւրաքանչիւր ուսուցչի համար ինքնագնահատման պահ համարելով՝ շարունակեց. «*Համաշխարհայանացման այս հանգրուանում, մեր մատաղ սերունդն ամէն օր տարբեր մշակոյթների ազդեցութեան տակ է գտնուում: Մեր ուսուցիչներն իւրաքանչիւր օր վերապատրաստման խնդրի առջեւ են կանգնած եւ եթէ նրանք չվերապատրաստուեն ու նրանց որակը չբարձրանայ, բնականաբար չեն կարող այս կարեւոր առաքելութիւնը յաջողութեամբ պսակել*»:

Ծրագրի շարունակութեան մէջ ձեռամբ գերշ. Սրբազան Հօր, հոգշ. Հայր Սուրբի եւ ազգային մարմինների ներկայացուցիչների պատուոյ գրեր եւ «Պատմութիւն Նոր Ջուղայի» գրքերը շնորհուեցին ուսուցչի գեղեցիկ կոչումը կրող ներկաներին:

Երեկոն եզարփակուեց թեմական առաջնորդ Սրբազան Հօր հայրական օրհնանքով: Գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը նշելով հայ ուսուցչի առաքելութիւնը մարդ՝ կերտելու եւ կազմաւորելու առնչութեամբ՝ ասաց. «*Այսօրւայ մեր ունեցածի համար պարտական*

Շարունակութիւնը՝ 34-րդ էջում

ՋԱՒԱԽՔԻՆ ՆՒՒՐՒԱԾ ԱԶԳԱՅԻՆ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԻՐԱՆԱՀԱՅ 5-ՐԴ ՄՐՑՈՅԹ-ՓԱՌԱՏՕՆԸ՝ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Հինգշաբթի՝ հոկտեմբերի 24-ին, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում, նախաձեռնութեամբ շրջանի Հայ Դատի «Արձագանք» Քարոզչական Յանձնախմբի, տեղի ունեցաւ Ջաւախքին նուիրուած ազգային-յեղափոխական երգերի իրանահայ 5-րդ մրցոյթ-փառատօնը, մասնակցութեամբ Թեհրանից, Շահինշահրից եւ Նոր Ջուղայից երգիչ-երգչուհիների: Ծրագրին ներկայ էին՝ Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, հիւրաբար Նոր Ջուղա գտնուող Յունաստանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Խորէն եպս. Տողրամաճեանը, հոգեւորականաց դասը, շրջանի Հայ Դատի Յանձնախմբի անդամներ, ազգային մարմիններ ի ու միութիւնների ներկայացուցիչներ եւ հոծ թւով ժողովուրդ:

Աւանդոյթի համաձայն, ծրագրի բացումը կատարուեց մրցոյթ-փառատօնի հիմնով, որից յետոյ «Արձագանք» Քարոզչական Յանձնախմբի անունից ներկաներին ողջոյնի խօսք ուղղեց օրուայ հաղորդավար Արթին Մուրադեանը: Ապա բեմը տրամադրուեց 4-րդ մրցոյթ-փառատօնի յաղթած Վանայ Շիրաանեանին, ով հանդէս եկաւ յաղթող երգի՝ «Հայաստանի»-ի, կատարմամբ: Ելոյթի ընթացքում Յանձնախմբի մտայղացմամբ եւ կազմակերպմամբ, Վանայի սպիտակ զգեստի վրայ ցուցադրուեցին վերածնունդ եւ յաւերժութիւն խորհրդանշող պատկերներ, որտեղ չորացած ծառը հետզհետէ ճիւղաւորուեց, բերք տուեց եւ իր գիրկն ընդունեց հեռաւոր թռչուններին:

Բացման հանդիսաւոր ծրագրին յաջորդեց մասնակիցների եւ հրաւարար կազմի անդամների ծանօթացումը: 5-րդ մրցոյթ-փառատօնի հրաւարարական դժուարին աշխատանքը վստահուած էր՝ երգերաժշտութեան ասպարէզում իրանահայ չորս մասնագէտներ՝ մեներգչուհի եւ վոկալի ուսուցչուհի Օֆիկ Մելիքեանին, դաշնակահար եւ խմբավար Անի Յակոբեանին, «Արփա» նուագախմբի հիմնադիր-անդամ եւ սաքսիֆոնահար Մինաս Գէորգեանին ու յեղափոխական երգերի մենակատար Արթին Քեշիշեանին: Նրանք հրաքանչիւր ելոյթից յետոյ իրենց տեսակէտն էին յայտնում կատարման կապակցութեամբ՝ 5-ից 10 գնահատականներ տալով՝ ըստ երգի ճիշտ մատուցման, առոգանութան ու բեմային կեցուածքի:

Մասնակիցների ելոյթների հերթականութիւնը վիճակահանութեամբ ճշտուել էր փառատօնին նախորդող օրը, հետեւեալ կարգով.

1. Արշէն Ոսկանեան՝ Թեհրան, «Տուն իմ հայրենի»
2. Արուրթին Հախնազարեան՝ Շահինշահր, «Պիտի գնանք»
3. Գէորգ Խաչատրեան՝ Թեհրան, «Նամակ»
4. Սարգիս Աբեդի՝ Թեհրան, Հայ Ուսում. «Զհարմանալ» միութեան կողմից, «Ախպէրս ու ես»
5. Փարելի Թահմազեան՝ Նոր Ջուղա, Ս. Ամենափրկչեան Վանքի «Տաթեւ» երգչախմբի կողմից, «Հայաստան»
6. Արմէն Թորոսեան՝ Շահինշահր, «Մովսէս Գորգիսեանի յիշատակին»
7. Մարտիկ Յովհաննիսեան՝ Շահինշահր, «Նրանք ընկան»
8. Ռուբիկ Իսայեան՝ Թեհրան, Հայ Մ. «Սիփան» Միութեան կողմից, «Ազատ Հայրենիք»
9. Անի Արզումանեան՝ Թեհրան, «Էլեգիա»
10. Արեգա Յարութիւնեան՝ Նոր Ջու-

ղա, Ս. Ամենափրկչեան Վանքի «Տաթեւ» երգչախմբի կողմից, Լիսբոնի հինգ մարտիկներին նուիրուած

11. Արգին Շահմիրզայեան, Շահինշահր, «Ձայն մը հնչեց»
12. Անդրէ Խաչատրեան՝ Շահինշահր, «Հայոց լեռներում»
13. Թանիա Մինասեան՝ Նոր Ջուղա, «Պիտի գնանք»
14. «Ասուպ» խումբ՝ Նոր Ջուղա, կատարմամբ՝ Վեհանուշ Խուդաբախշեանի եւ Լալա Ալեքսանդրեանի եւ նուագակցութեամբ Մհեր Խուդաբախշեանի, Կարէն Դիլանչեանի, Նարբէ Կարապետեանի, Վահէ Կարապետեանի, Ադրիան Դաւթեանի եւ Դրօ Տէր Մարտիրոսեանի, «Կիլիկիա»

Մրցոյթ-փառատօնի ընթացքում իր խօսքն ունեցաւ շրջանի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչ Աշոտ Դաւթեանը՝ կարեւորութեամբ ընդգծելով. «*Հայ Ժողովուրդը մէկ միասնականութիւն է, մէկ մարմին, աշխարհի որեւէ անկիւնում էլ, որ լինի ինչպէս Հայաստանում, Արցախում , թէ Ջաւախքում։ Սրբազան գաղափարը թելադրում է մեզ հպարտանալ հայութեան իւրաքանչիւր հատուածի յաղթանակներով ու յաջողութիւններով, միաժամանակ մտահոգւելով առկայ դժւարութիւնների եւ մարտահրաւէրների ուղղութեամբ*»: Նա ողջունելով ներկաներին եւ սոյն միջոցառման կազմակերպման բուն նպատակը՝ ասաց. «*Նոր Ջուղայի հայութիւնը շրջանի Հայ Դատի Յանձնախմբի գլխաւորութեամբ իր պարտքն է համարում միանալ ջաւախքահայութեան արդար իրաւունքների ձեռքբերման պայքարին*»:

Արդիւնքների ամփոփումից յետոյ, երկու բարձրագոյն նիշ ունենալու պատճառով՝ իրաւարար կազմի որոշմամբ, Թանիա Մինասեանն ու Մարտիկ Յովհաննիսեանը դարձեալ մրցեցին միմեանց հետ՝ այս անգամ առանց երաժշտութեան (ակաբելա) երգ կատարելով, որից յետոյ իրաւարարները 5-րդ մրցոյթ-փառատօնի յաղթող յայտարարեցին Մարտիկ Յովհաննիսեանին՝ խոստովանելով, որ ընտրութիւնը դժւար է եղել եւ երկու երգիչներն արժանի են յաղթող կարգին: Ըստ իրաւարարների գնահատանքի՝ փառատօնի երկրորդ կարգի մրցանակակիր հանդիսացաւ Թանիա Մինասեանը, իսկ երրորդը՝ Գէորգ Խաչատրեանը:

5-րդ մրցոյթ-փառատօնի աւարտին ձեռամբ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանի, գերշ. Տ. Խորէն եպս. Տողրամաճեանի, շրջանիս Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչ Աշոտ Դաւթեանի եւ «Արձագանք» Քարոզչական Յանձնախմբի պատասխանատու Զօրիկ Յովսէփեանի, նախ մրցանակներ եւ գնահատագրեր շնորհուեցին առաջին, երկրորդ եւ երրորդ կարգ հանդիսացողներին, ապա գնահատագրեր յանձնուեցին միւս մասնակիցներին: Շնորհակալագրերով պարգեւատրուեցին նաեւ իրաւարարներն ու կազմակերպական գործում յանձնախմբին օժանդակած միութիւններն ու անհատները:

Երեկոն եզարփակուեց յաղթող երգի եւս մէկ անգամ կատարմամբ, որից յետոյ հանդիսատեսն առիթ ունեցաւ այցելելու կից սրահում նախորդ 4 մրցոյթ-փառատօնների եւ Ջաւախքի բնութեան ու տեսարժան վայրերի լուսանկարներից կազմուած ցուցահանդէսը:

Յատկանշական է, որ ինչպէս նախորդ տարիները՝ այս տարի եւս միջոցառմանը զուգահեռ կազմակերպւել էր նուիրահաւաք, որտեղ ցանկացողներն իրենց նիւթական օժանդակութիւնը ցուցաբերեցին Ջաւախքի ֆոնդին:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԿԱՐՆԵՐԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՒ

Ուրբաթ՝ սեպտեմբերի 6-ի երեկոյեան, Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան շրջափակում ժողովրդական տօնախմբութեամբ նշուեց Արցախի անկախութեան 22-րդ տարեդարձը՝ նախաձեռնութեամբ շրջանի Հայ Դատի «Արձագանք» Քարոզչական Յանձնախումբի:

Անակնկալներով լի տօնախմբութիւնը՝ սկսած անուշաբոյր ուտեստներից եւ շրջափակում տեղադրուած զարմալի խաղերից, մինչեւ ազգային-յեղափոխական երգերի կենդանի կատարումը՝ տաղանդաւոր երիտասարդներ Արթին Ղարախանեանի երգեցողութեամբ եւ Արգին Ղարախանեանի նուագակցութեամբ, մեծ խանդավառութիւն առաջացրեց ներկաների մօտ եւ առաւել բարձրացրեց նրանց տօնական տրամադրութիւնը:

Տօնախմբութեանը զուգահեռ Միութեան շրջափակում կազմակերպել էր լուսանկարների ցուցահանդէս, ուր ցուցադրել էին համառօտ բացատրականներ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան, դրօշի, ազատագրական պայքարի ու անկախութեան առնչութեամբ եւ լուսանկարներ՝ պատերազմի տարիներից, քաջարի ազատամարտիկների եւ Արցախի ժողովրդի մշակութային ու կրթական կեանքից եւ տեսարժան վայրերից:

Ցուցահանդէսին կից առանձին անկիւնում ցրւում էր տեսաժապաւէն՝ ցուցահանդէսին համահունչ թեմայով:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՒ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՕՆԵՐԻ ԱՌԹԻՒ ԲԱՆԱԽՕՍԱԿԱՆ ՈՒ ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Նոր Ջուղայում Սրբոց Թարգմանչաց եւ Հայ Մշակոյթի տօների նշման ձեռնարկների շարանում, ուրբաթ՝ հոկտեմբերի 18-ի երեկոյեան Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան սրահում տեղի ունեցաւ բանախօսական եւ գեղարուեստական յայտագրով յագեցած ձեռնարկ, որը նախաձեռնել էր Միութեան Մշակութային Միաւորի Վարչութիւնը:

Ծրագրին ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, քահանայից դասը, ազգային մարմինների եւ շրջանիս Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչները, Միութեան արտօնատէր պրն. Թաթուլ Օհանեանը, ուսուցիչ-ուհիներ, միութենականներ եւ համայնքի անդամներ:

Օրուայ առթիւ հրաւիրուած էր բանախօսելու Երեւանի Պետական Համալսարանի միջազգային յարաբերութիւնների ֆակուլտետի տնօրէնի տեղակալ եւ պատմական գիտութիւնների թեկնածու դոցենտ Ժակ Մանուկեանը, ով հանդէս եկաւ «Հայկական քաղաքակրթութեան շարունակականութիւնը» թեմայով բանախօսութեամբ:

Յարգելի բանախօսն իր ելոյթի մէջ պատմական

հետաքրքիր փաստերով բնութագրեց հայ լեզուի միաւորիչ ուժի, պետականութեան բացակայութեան ժամանակ միասնութիւնը ապահովող կրօնի եւ ազգասիրութիւն ու ընտանիք տարրերից բաղկացած հայ ինքնութեան կարեւոր իրողութիւնների դերակատարութիւնը հայկական քաղաքակրթութեան զարգացման ու շարունակականութեան հարցում:

Ծրագրի երկրորդ բաժնում Ռիմա Սիմոնեանի գեղարուեստական ղեկավարութեամբ եւ խմբավար Արմէն Ամիրխանեանի համագործակցութեամբ, հանդիսատեսը վայելեց Մշակութային Միաւորի «Կռունկ» ասմունքի եւ պարի համոյթի եւ երգիչ-ուհու կատարմամբ գեղարուեստական յայտագիրը, որն ընդմիջում էր հաղորդավար Կարին Տէր Մարտիրոսեանի միջոցով արտասանուող հայ մշակոյթին առնչուող հետաքրքիր կտորների կատարմամբ:

Ծրագրի աւարտին թեմական առաջնորդ Սրբազան Հայրը եզրափակիչ խօսքում անդրադառնալով Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ թարգմանիչ վարդապետների մեծ վաստակին, բարձր գնահատեց հայ Մշակոյթի առթիւ իրականացած ձեռնարկի կազմակերպումը եւ գնահատանքի խօսք ուղղեց յարգելի բանախօսին, գեղարուեստական բաժնի մասնակից երիտասարդ-ուհիներին ու պատասխանատուներին:

Նշելի է, որ պրն. Մանուկեանի նեկայութիւնն առաւել վայելելու նպատակով շաբաթ՝ հոկտեմբերի 19-ի երեկոյեան, նախաձեռնութեամբ Մշակութային Միաւորի Վարչութեան, տեղի ունեցաւ հանդիպում, որին ներկայ էին Մշակութային Միաւորի Վարչութիւնը, «Կռունկ» ասմունքի եւ Գրական խմբի պատասխանատուն եւ անդամ-ուհիները, պարախմբի անձնակազմը, Ուսանողական Միաւորի եւ «Ռուբէն» Երիտասարդական Միութեան անդամ-ուհիները: Հանդիպման ընթացքում պրն. Մանուկեանը հանդէս եկաւ «Հայաստանի յարաբերութիւնները հարեւան երկրների հետ» թեմայով դասախօսութեամբ եւ պատասխանեց ներկաների հարցերին:

Շարունակութիւն՝ 13-րդ էջից

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ...

Այնուհետեւ Հայր Սուրբն ու նրան ընկերակցող պատուիրակութիւնը ներկայացան Ն.Ջ. Հայոց Ազգային Մանկապարտէզ եւ Նախակրթարան, որտեղ նոյնպէս տեղի ունեցաւ տարեմուտի արարողութիւն: Սկզբում դպրոցի տեսչուհի Քառոլին Դիլանչեանը շնորհաւորանքի խօսք ուղղելով բոլորին՝ յոյս յայտնեց, որ սաների մօտ առաջացած դպրոցի նկատմամբ վառ տպաւորութիւնները միշտ ուղեկցի նրանց եւ ծնողներն օրըստօրէ տեսնեն իրենց զաւակների զարգացումն ու աճը, ապա Հայր Սուրբը դիմելով մանուկներին նրանց խրախուսեց հնազանդ լինել դաստիարակներին, միշտ սիրել մայրենի լեզուն եւ խօսել հայերէն:

Արարողութիւնն աւարտեց «Տէրունական Աղօթք»-ով եւ առաջին զանգի գեղեցիկ ու հարազատ ղօղանջով:

Ü¦æ¦ Ð²Ú Ø¦Ø¦ §²ð²ð²î¦ ØÆàôÂº²Ü ü àôî´àÈÆ ÊØ´ºðÆ ²ÞÊ²î²ÜøÜºð

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան Ֆուտբոլի Յանձնախումբը, նպատակ ունենալով առաւել կազմակերպելու Միութեան ֆուտբոլի խմբերի աշխատանքները, կազմակերպել է մի շարք աշխատանքներ, որոնք ներկայացնում ենք ստորեւ:

***

Ա)

Պատանեկան ֆուտբոլի խումբը 2013 թւականի սեպտեմբերի 12 առ 15-ը մասնակցել է Թեհրանում կազմակերպւած 3-օրեայ ճամբարի:

Ճամբարի նպատակներն են եղել՝ ծանօթանալ մարզական ճամբարներին, ունենալ ընկերական մրցոյթներ Նոր Ջուղայից դուրս, այցելել Թեհրանի տեսարժան վայրերը, դիտել Հ.Մ.Ա.Կ.-ի 45-րդ համահայկական խաղերը:

Սոյն ճամբարին մասնակցած մարզիկներն էին՝ Գեւիկ Մկրտչեանը, Հրատ Ղուկասեանը, Շիրակ Օրոջեանը, Ռուբէն Իսաղուլեանը, Արութին Մովսիսեանը, Թադէ Մկրտչեանը, Էդրիան Շաֆրազեանը, Արւին Թորոսեանը, Արմին Մինասեանը, Անդրու Ալեքսանդրեանը, Սիփան Անդրիասեանը, Նարբէյ Ղարիբեանը, Նարեկ Յովսէփեանը, Արսիս Յովհաննիսեանը, Արսիս Ղեւոնդեանը, Միքիա Դաւթեանը, Վանասիս Պարսամեանը:

Խմբին ընկերակցել էին Սերժիկ Ասատրեանը՝ գլխաւոր մարզիչը, եւ մարզիչներ Արգամ Թորոսեանն ու Վանանդ Շիրւանեանը:

Ճամբարի ծրագիրն իրականացւեց ըստ հետեւեալի.

Հինգշաբթի՝ 12 սեպտեմբերին խումբը մեկնեց Թեհրան: Ուրբաթ՝ սեպտեմբերի 13-ին Սիփան սրահում իրականացւեց մարզական փորձ: Շաբաթ՝ սեպտեմբերի 14-ին, Ռաֆֆի Միութեան դաշտում, «Ռաֆֆի» համալիրի մարզիկների հետ տեղի ունեցաւ ընկերական խաղ, որը 4-1 արդիւնքով յանձնւեց «Ռաֆֆի»-ին: Կիրակի սեպտեմբերի 15-ին խումբն այցելեց Թեհրանի «Միլադ» աշտարակը:

Ճամբար մեկնած խումբը երեք գիշեր ներկայ է գտնւել Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.- ի մարզաւանում եւ դիտել Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան ֆուտբոլի երէցների խմբի մրցոյթները:

***

Բ)

Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութեան մանկա-պատանեկան ֆուտբոլի խումբը միօրեայ զբօսանք է ունեցել ուրբաթ՝ 2013 թւականի սեպտեմբերի 17-ին:

Սոյն ծրագրին, մարզիչներ Սերժիկ Ասատրեանի, Արգամ Թորոսեանի եւ Վանանդ Շիրւանեանի ղեկավարութեամբ ու պատասխանատուներ Քլար Ասատրեանի, Վիլմա Վարդանեանի եւ Կարինէ Ղուկասեանի ընկերակցութեամբ մասնակցել են հետեւեալ մարզիկները.

Մհեր Մինասեան, Ժանօ Շահիջանեան, Վանասիս Դաւուդի, Վահէ Յակոբեան, Արին Քեշիշեան, Բրայեան Շահբազեան, Արութին Առաքելեան, Նարեկ Ղարիբեան, Թադէ Խուդավերդեան, Արգին Մկրտչեան, Էմին Բարսեղեան, Վանասիս Պարսամեան:

ՄԱՆԿԱԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Գեղեցիկ մտայղացում է կազմակերպել դաշտահանդէս, այն էլ մանուկների համար: Բնականաբար մթնոլորտը կը լինի ուրախ եւ հաճելի, իսկ միջավայրը զարդարուած գունեղ ծաղիկներով, որի զարդերը վստահաբար մեր մանուկներն են:

Ուրբաթ՝ 2013 թւականի օգոստոսի 2-ի երեկոյեան ժամը 7-ից, Հայ Ուս. «Զհարմահալ» Միութեան Ն.Զ. Մասնաճիւղի շրջափակում յատուկ եռ ու զեռ էր տիրում. փոքրիկների զւարճանքից ժպտում ու խնդում էին նաեւ մեծերը:

Ծրագրի հաղորդավարն էր Վեհանուշ Խուդաբախշեանը: Նա իր քաղցր ձայնով ողջունեց եւ ուրախ ժամանց ցանկացաւ եւ յանկարծ անակնկալի բերեց բոլորին, երբ ելոյթի հաւիրեց Միութեան Մանկա-Պատանեկան «Մեղեդի» երգչախումբը. խմբի սաներն առաւել եւս ջերմութիւն հաղորդեցին տօնահանդէսին. նրանք շնորհիւ շնորհալի ղեկավար Մեղեդի Ք. Օհանեանի, որին երգեհոնով ընկերակցում էր Հարմա Կարապետեանը, հանդէս եկան երեք խմբերգով: Գեղեցիկն այն էր, որ «Մեղեդի» երգչախմբի քնքուշ ու անուշիկ աղջիկները ծրագրի վերջին երգը՝ «Ղարաբաղ»-ը նւիրեցին դաշտահանդէսին ներկայ իրենց ընկերներին:

Միութեան շրջափակում զանազան խաղերի կողքին նկատւում էր գրքի եւ մանկական երգերի ու հեքիաթների ձայնասկաւառակների վաճառքը, նաեւ նկարչութեան կրպակը:

Հանդէսի ուրախ մթնոլորտն աւելի զարգացաւ, երբ ուրախ ծաղրածուն միացաւ մեր փոքրիկներին ու շրջպարով աշխուժացրեց միջոցառումը, իսկ բուրաւէտ «ծաղիկ»-ն իր անուշ բոյրով շուք տւեց ծրագրին. երեխաները վազվզելով նրա շուրջ՝ շոյում էին նրան, որ ծաղիկն էլ արեւի նման ժպտայ իրենց: Ծաղկի դիմակի տակ թագնւել էր Թանգիկ Զարդն Դաւուդը, իսկ ծաղրածուի կերպարը ներկայացրեց Արամէ Նաւասարդեանը:

Իրօք մինչեւ ուշ գիշեր հաճելի պահեր անցան եւ բոլորը բարձր տրամադրութեամբ հեռացան Միութեան շրջափակից:

Դաշտահանդէսը կազմակերպւել էր Հայ Ուս. «Զհարմահալ» Միութեան Ն.Զ. Մասնաճիւղի Վարչութեան, Զեռնարկային եւ Մանկական յանձնախմբերի միջոցով: Ներկաների գոհունակութիւնը դարձաւ նրանց բաւարարութիւնը եւ բոլորին ցանկացան միշտ ուրախ պահեր:

Հայ Ուս. «Զհարմահալ» Միութեան
Ն.Զ. Մասնաճիւղի Թղթակից

ՍԵՊՏԵՄԲԵՐ 21-ԻՆ ՆՒԻՐՒԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՀԱՅ ՈՒՍ. «ՉՀԱՐՄԱՀԱԼ» ՄԻՈՒԹԵԱՆ Ն.Ջ. ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՅԱՐԿԻ ՏԱԿ

Հայ Ուս. «Զհարմահալ» Միութեան Ն.Ջ. Մասնաճիւղի Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Ձեռնարկային Յանձնախմբի կազմակերպութեամբ, հինգշաբթի՝ սեպտեմբերի 19-ի երեկոյեան ժամը 8-ին, Միութեան շրջափակում համեստ ծրագրով նշուեց Հայաստանի Հանրապետութեան 22-րդ տարեդարձը:

Սկզբում օրուայ հաղորդավար Վեհանուշ Խուդաբախշեանը հանդէս եկաւ շնորհաւորանքի եւ բացման խօսքով, որտեղ կարեւորելով այս պանծալի առիթի նշումը աշխարհասփիւռ հայութեան համար՝ աւելացրեց, թէ Հայրենիքի վերանկախացումը, որպէս վերածնունդ եւ զարթօնք, դարձաւ յաղթանակի նոր շրջան:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեց Միութեան Վարչութեան նախագահ Սերոժ Վարդանեանը՝ օրուայ խորհրդի առնչութեամբ արտայայտուելու: Նա ողջունելով տօնի առթիւ՝ ասաց. «*Իւրաքանչիւր հայի համար պարծանք է, երբ տարբեր միջավայրերում կամ միջազգային միջոցառումներում որպէս անկախ պետութիւն, օտար երկրների դրօշի կողքին ծածանւում է նաեւ մեր եռագոյնը*»:

Ծրագրի շարունակութեան մէջ դասախօսութեամբ ելոյթ ունեցաւ Հայ Ուս. «Զհարմահալ» Միութեան վաստակաշատ անդամ, ազգային-հասարակական գործիչ պրն. Թաթուլ Օհանեանը: Նա սեպտեմբերի 21-ի անկախութիւնը մայիս 28-ի յաղթանակի շարունակութիւնը համարելով՝ գնահատեց Միութեան Վարչութեան մտայղացումը՝ առիթի նշման կապակցութեամբ եւ ասաց. «*Անկախութիւն այսինքն՝ որեւէ այլ պետութեան կախում չունենալ ու միջազգային յարաբերութիւնների մէջ ինքնավար լինել։ Այսօր մեր եռագոյնը ծածանւում է Միաւորուած Ազգային Կազմակերպութեան չէնքում եւ մենք ենք տնօրինում մեր երկիրը։ Ժողովուրդը, որպէս մարդ էակի հաւաքականութիւն, միշտ ձգտել է դէպի անկախութիւն, որովհետեւ ճնշող ժողովուրդը ենթարկւում է զանազան բռնութիւնների։ Պայքարներ կարելի է մղել գաղութատիրութեան, աշխարհակալութեան, կայսերապաշտութեան եւ ծաւալապաշտութեան դէմ, սակայն անկախութեան համար պայքարը յառաջադիմական է*»: Մի այլ բաժնում բանախօսն այսպէս ներկայացրեց. «*Հայաստանը միշտ նւաճւել է ուրիշների կողմից, որի հետեւանքով հայը տեսել է բռնութիւն, թալան, գաղթ, բռնաբարում, հրկիզում, աւեր եւ աւար. այս բռնութիւնները հայի մէջ ստեղծել է իւրայատուկ նկարագիր եւ նրա մօտ զարգացրել է անկախութեան գաղափարը*»:

Ծրագիրը յագեցած էր նաեւ օրւան պատշաճ մեներգերով ու ասմունքով: Վահագն Դաւթեանի գրչին պատկանող «Հայ Ժողովրդին» բանաստեղծութեամբ հանդէս եկաւ Միութեան անդամ Նոռա Շահիջանեանը եւ երկու ազգային երգերով ելոյթ ունեցաւ Շաքէ Մովսիսեանը, իսկ ընթացքում օրուայ հաղորդավարն ընթերցեց առիթին պատշաճ ասոյթներ եւ քառեակներ:

Միջոցառման պաշտօնական բաժնի աւարտին ներկաներին իր օրհնութիւնը փոխանցեց արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը՝ կարեւորութեամբ ընդգծելով, որ անկախութիւնն ամէն ազգի երաշխիքն է՝ գոյատեւման համար:

Տօնակատարութիւնը շարունակւեց մտերմիկ մթնոլորտում՝ խրախճանքով եւ ընդունելութեամբ:

ՆՇԻԵՑ ՀԱՅ ՈՒՍ. «ՉՀԱՐՄԱՀԱԼ» ՄԻՈՒԹԵԱՆ 83-ԱՄԵԱԿԸ

Հայ Ուս. «Զարմահալ» Միութեան Նոր Զուղայի Մասնաճիւղի Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Զեռնարկային Յանձնախմբի կազմակերպութեամբ, հոկտեմբերի 10-ին, Միութեան յարկի ներքոյ, անդամների եւ մի շարք հիւրերի ներկայութեամբ տօնուեց Միութեան հիմնադրման 83-րդ տարեդարձը:

Միութիւնը հիմնադրուել է 1930 թւականին եւ ներկայիս Նոր Զուղայի Մասնաճիւղն իր բեղուն գործունէութիւնը շարունակում է 90 անդամներով:

Տօնական երեկոն մեկնարկեց Մասնաճիւղի Վարչութեան նախագահ պրն. Սերոժ Վարդանեանի խօսքով, որտեղ շնորհաւորելով առիթի կապակցութեամբ, խնդրեց մէկ րոպէ յոտնկայս լռութեամբ յարգել Միութեան հիմնադիրների եւ անցեալի անդամների յիշատակը: Նա իր խօսքի շարունակութեան մէջ ասաց, թէ հպարտ է Միութեան անդամներով, քանի որ նրանք միասնաբար պահպանում են Միութիւնը եւ մեծ խանդավառութեամբ շարունակում հիմնադիրների ուղին:

Ապա օրուայ հանդիսավար պրն. Ալֆրեդ Ղարախանեանը հրաւիրեց Միութեան նախորդ շրջանի Վարչութեան նախագահ պրն. Ցոլակ Յարութիւնեանին՝ օրուայ առթիւ արտայայտուելու:

Պրն. Յարութիւնեանը, ողջոյնի ջերմ խօսքերից յետոյ, անդրադարձաւ ժամանակի դժուարին պայմաններում Միութեան հիմնադրմանը եւ երկար տարիների ընթացքում ծաւալած գործունէութեանը, կարեւորելով երիտասարդութեան աշխոյժ մասնակցութիւնը եւ դերակատարութիւնը միութիւններում:

Այնուհետեւ միջոցառումը շարունակուեց հանդիսավարի հումորով լի սրամիտ խօսքերով, անդամ-ուհիների հայրենասիրական երգերի կատարմամբ, բարեմաղթանքների փոխանցմամբ եւ հայկական երաժշտութեան ներքոյ ներկաների պարերով: Ընթացքում բոլորը վայելեցին աւանդական ուտեստները եւ առիթը խորհրդանշող համեղ կարկանդակը, որը հատուեց Մասնաճիւղի Վարչութեան փոխ-նախագահ տկն. Սանդրա Խուդաբախշեանի եւ Զեռնարկային Յանձնախմբի նախագահ տկն. Սեդիկ Բալեանի միջոցով:

Վերջում արտայայտուեց նաեւ Միութեան վաստակաւոր անդամ պրն. Ռազմիկ Տէր Գրիգորեանը, որը շնորհաւորելով առիթի կապակցութեամբ՝ շնորհակալական խօսք ուղղեց Միութեան Վարչութեանը՝ նուիրական աշխատանքի եւ Միութեան անդամների հանդէպ ցուցաբերած հոգատարութեան, իսկ Զեռնարկային Յանձնախմբին՝ տքնաջան եւ սիրայօժար աշխատանքի համար:

ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՓԱՅՏԷ ՁԵՌԱՐՒԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Նախաձեռնութեամբ Փերիոյ Կրթասիրաց Միութեան Կենտրոնական Վարչութեան եւ համագործակցութեամբ նոյն Միութեան Կանանց Միաւորի, Նոր Ջուղայի «Կատարինեան» դպրոցի նախկին շէնքի սրահում կայացաւ նկարչութեան եւ փայտէ ձեռարուեստի ցուցահանդէս, որի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ հինգշաբթի՝ հոկտեմբերի 31-ի երեկոյեան ժամը 5-ին, ներկայութեամբ՝ արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանի, արժ. Տ. Խաչատուր քհնյ. Զարգարեանի, Ազգային մարմինների ու Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչների, Սպահանի Արուեստի Համալսարանի դասախօսների եւ պատասխանատուների ու հայ եւ պարսիկ արուեստասէր ժողովրդի:

Բացման արարողութեան սկիզբը հանդիսացաւ Փերիոյ Կրթասիրաց Միութեան Կենտրոնական Վարչութեան նախագահ Հայկ Հայրապետեանի բարիգալստեան եւ շնորհակալական խօսքը: Նա իր արտայայտութեան շարունակութեան մէջ կարեւորութեամբ անդրադարձաւ ցուցադրուած ձեռարուեստների հեղինակներին:

Յաջորդիւ պարսկերէն լեզուով արտայայտուեց Վարուժան Բաղումեանը, որտեղ ողջոյնի խօսք փոխանցեց բոլորին եւ Միութեան անունից շնորհակալութիւն յայտնեց ազգային մարմիններին՝ մշակութային ծրագրերի կազմակերպման ուղղութեամբ աջակցելու համար: Պրն. Բաղումեանի խօսքը նոյնպէս աւարտուեց հեղինակների մասին բացատրութեամբ:

Այնուհետեւ ցուցահանդէսի պաշտօնական բացումը կատարուեց քահանայ հայրերի եւ Թեմական Խորհրդի ատենապետ Նոէլ Մինասեանի միջոցով՝ ժապաւէնի հատմամբ, որից յետոյ ներկաները մուտք գործեցին ցուցասրահ, ուր յատուկ դասաւորութեամբ ցուցադրուել էին գեղեցիկ ստեղծագործութիւնները՝ հանգուցեալ նկարիչ եւ գրաֆիստ Նահապետ Նահապետեանի, իրանահայ բանաստեղծ եւ համալսարանի դասախօս Ազատ Մաթեանի, գեղանկարիչ Անիթա Սահակեանի ու քանդակագործ Հրաչ Թորոսեանի:

Ցուցահանդէսին առանձնայատուկ բոյր էր հաղորդում յատկապէս աշխատանքների ոճերի տարբերութիւնը, ինչպիսիքն են՝ Ազատ Մաթեանի փայտից եւ չմշակուած ճիւղերից պատրաստուած արձանները, Նահապետ Նահապետեանի ջրաներկով ու իւղաներկով գեղանկարչութիւնները, Անիթա Սահակեանի հիմնականում բնութեան թեմայով փաստելով նկարչութիւններն ու Հրաչ Թորոսեանի փայտից քանդակուած արձաններն ու խաչքարերը:

Շարունակութիւնը՝ 34-րդ էջում

²ðò²ÊÆÐ²Üð²ä°îàôÂ°²Ü²ÜÎ²ÊàôÂ°²ÜÐèâ²ÎØ²Ü 22-²Ø°²ÎÆîúÜ²Î²î²ðàôÂÆôÜÞ²ÐÆÜÞ²ÐðàôØ

Շահինշահրի «Ռուբէն» Երիտասարդական եւ Պատանեկան միութիւնների միջոցով, 2013 թւականի սեպտեմբերի 5-ի երեկոյեան, Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում պատշաճ հանդիսութեամբ նշուեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան հռչակման 22-ամեակը: Ներկայ էին Սպահանի Հայոց Թեմի առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը, Շահինշահրի Հայ Համայնքի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Թեմի Պատգամաւորական Ժողովի, ազգային մարմինների, Ն.Զ. Հայ Դատի Յանձնախմբի, Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան եւ միութիւնների ներկայացուցիչները, նաեւ համայնքի գիտակից անդամներ:

Ծրագրի բացումը կատարուեց Արցախի Հանրապետութեան հիմնի յոտնկայս ունկնդրութեամբ, ապա «Ռուբէն» Երիտասարդական Միութեան անդամ Վահէ Թահմազեանը ներկայացրեց բացման խօսքը՝ նախաբան ունենալով Գրիշ Դաւթեանի գրչին պատկանող «Յաղթերգ Արցախեան» բանաստեղծութիւնը՝ նուիրուած արցախեան պայքարի յաղթանակին: Բացման խօսքի մէջ կարեւորութեամբ նշուած էր. «*Այսօր, երբ անկոտրուն Արցախն ամենայն խիզախութեամբ անցել է անկախութեան քարքարոտ ու դժուարին ճանապարհը, անհրաժեշտ է հետեւել քաջարի ու սխրագործ հայորդիների ազատատենչ ոգուն եւ սատարել ու նեցուկ հանդիսանալ Արցախի ժողովրդին ու պետութեանը եւ բոլոր հնարաւորութիւններն ի սպաս դնել՝ ի խնդիր Արցախի կայունացման, առաւել ամրապնդման եւ ի վերջոյ ամբողջական Հայաստանի կերտման*»:

Ծրագրի յաջորդ բաժնում բեմ հրաւիրուեց օրուայ բանախօս պրն. Արիս Դաւթեանը, ով համապարփակ կերպով բացատրութիւններ ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի անկախութեան տարիներին տիրող պատմական եւ ճակատագրական ծանր պայմանների եւ արցախահայութեան կենաց ու մահու մղած պայքարի եւ յաղթանակի մասին: Նա իր խօսքի մէջ ասաց. «*Արցախի անկախութիւնը հայ ժողովրդի համար միայն ինքնորոշման իրաւունքի ձեռքբերում չէր: Արցախի անկախացումով հայ ժողովուրդը, որ դարեր շարունակ միայն կորուստներ էր ունեցել եւ իր հողերն օտարի լծի տակ էր տեսել, կարողացաւ վերականգնել իր եւ իր պապերի պատիւը: Դա է որ մեզ պարտաւորեցնում է Արցախի ազատագրմանը դիտել այլ հայեացքով*»: Շարունակութեան մէջ յարգելի բանախօսը նշեց Արցախի ազատագրման պայքարի կարեւոր ձեռքբերումները՝ հետեւեցնելով. «*Արցախն այսօր ազատ է, բայց արդեօք մեր պայքարն աւարտո՞ւ է: Այսօր հակառակորդը հիմնւելով իր նաֆտադոլարներին, ամէն օր սպառնում է մեր Արցախին: Տակաւին Արցախ-Ադրբեջան չփման գծում գոհւում են հայ զինուորներ, կայ Արցախի դեֆակտո անկախութիւնն աշխարհին ճանաչեցնելու հարցը, Արցախը հայերով վերաբնակեցման եւ տնտեսապէս զարգացման խնդիր ունի: Պէտք է մեր համատեղ ուժերով Արցախը դարձնենք այնպիսի վայր որ ամէն հայ հպարտութիւն ապրի դրանով*»:

Պրն. Դաւթեանն իր խօսքն աւարտեց ազգային գործիչ Հրայր Մարուխեանի հետեւեալ խօսքերով. «*Հայրենիքն այսօր ապրում է այնպիսի պայմաններ, որ այս պայմանների մէջ դաշնակցականը, նախկին համայնավարը, հնչակեանը, ռամկավարը, եւ ընդհանրա-*

պէս ով որ կայ եւ տրամադիր է հայ կեանքի մէջ ներդրում կատարելու, բոլորը միասին պէտք է ի վիճակի լինեն առողջ քաղաքական ուղեգիծ մշակելու, միասին՝ ձեռք-ձեռքի տուած։ Մեր ժողովուրդն աւելի քան երբէք պարտաւոր է մտածել իբրեւ մէկ ժողովուրդ, մէկ ազգ»:

Ձեռնարկի գեղարուեստական բաժինը կազմուած էր երկու մասից. նախ պաստառի վրայ ցուցադրուեց տեսանիւթ՝ Արցախի պատմութեան մասին, ապա բեմ բարձրացան «Ռուբէն» Երիտասարդական եւ Պատանեկան միութիւնների անդամները եւ յաջորդաբար ներկայացրին «Հերիք է ընկեր», «Ղարաբաղցի», «Վեր կաց ժողովուրդ», «Ղարաբաղի ողբը», «Սա ինչ Ղարաբաղ է», «Լեռան լանջին», «Հիմի էլ լռենք», «Ղարաբաղ» եւ «Զարթիր լաւ» խմբերգերը, մեներգերը եւ ասմունքները, որոնց մէջ ընդ մէջ իրենց գեղեցիկ խօսքերով եւ բացատրութիւններով ընդհատում էին բեմավարներ Արգին Ղարիբեանը եւ Աւենիա Մինասեանը:

Գեղարուեստական բաժինը ղեկավարել էր հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, իսկ երգերի գործիքաւորումը կատարուել էր պրն. Հարմա Կարապետեանի միջոցով:

Ծրագիրն իր տրամաբանական աւարտին հասաւ թեմական առաջնորդ Սրբազան Հօր հայրական պատգամով, որի մէջ նա անդրադարձաւ Արցախի անկախութեան եւ արեամբ շաղախուած ու զոհագործութեամբ շահուած հայրենի հողի վեհ արժէքին: Գերշ. Սրբազան Հայրն իր ուրախութիւնը յայտնեց առ այն, որ համայնքի պատանի-երիտասարդները գիտակցութիւնն են ունեցել պատշաճ միջոցառումով նշել եւ արժեւորել հայ ժողովրդի պատմութեան ամենագլխաւոր դէպքերից մէկը՝ Արցախի Հանրապետութեան անկախութեան տօնը:

Ձեռնարկից յետոյ, հայոց դպրոցի փոքր սրահում, բացումը կատարուեց Արցախին եւ արցախեան պայքարին նուիրուած լուսանկարների ցուցահանդէսի: Ներկաները բանախօսութեան եւ գեղարուեստական ծրագրից ստացած լիցքերն առաւել հարստացրին ցուցահանդէսն այցելելով:

2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻԱՅ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ ՀՆՉԵՑ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Երկուշաբթի՝ 2013 թւականի՝ սեպտեմբերի 23-ի վաղ առաւօտից, Շահինշահրի Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի սաները, համազգեստները հագած, իրենց ծնողների եւ հարազատների հետ ներկայացել էին դպրոցում՝ սկսելու ուսումնական նոր տարեշրջանը:

Գլխաւորութեամբ Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի եւ ներկայութեամբ Սպահանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովի, Թեմական ու Կրթական խորհուրդների եւ Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան ներկայացուցիչների, առաւօտեան ժամը 10:00-ին բացումը կատարուեց 2013-2014 թւականի տարեշրջանի: Սաները, նրանց ծնողներն ու հարազատները դպրոցի ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի առաջնորդութեամբ մուտք գործեցին դպրոցի սրահ, որտեղ նախ դպրոցի տեսչուհի տկն. Ալիս Մկրտչեանը շնորհաւորելով 2013-2014 ուսումնական տարեշրջանի սկսման առթիւ, բարի գալուստ մաղթեց Մանկապարտէզի նորամուտ փոքրիկ սաներին եւ յաջողութեան մաղթանքներ ուղղեց Նախակրթարանի սաներին, ովքեր սկսել էին ուսումնական նոր փուլ:

Յաջորդիւ հոգշ. Հայր Սուրբն իր ողջոյնի խօսքն ուղղեց ծնողներին ու սաներին՝ իր ուրախութիւնը յայտնելով այս տարեշրջանի

աշակերտների թի յաւելման համար: Նա շեշտեց թէ հայ մանուկն իր առաջին համարձակ քայլերը սովորում է հէնց մանկապարտէզից, սովորում է «Տէրունական Աղօթք»-ը, արտայայտել իր մտքերը, շփուել նոր ընկերների հետ եւ ճիշտ ու սահուն հայերէն խօսելը: Ապա առաջնորդ Սրբազան Հօր մաղթանքը եւ ողջոյնի խօսքը փոխանցեց երեխաներին եւ ծնողներին, մաղթելով բարութեամբ, սիրով եւ յաջողութիւններով լի տարեշրջան:

Բոլոր ներկաները, միանալով սաներին, արտասանեցին «Տէրունական Աղօթք»-ը:

Բացման պաշտօնական արարողութիւնից յետոյ, Մանկապարտէզ-Նախակրթարանի սաները մեծ ուրախութեամբ մուտք գործեցին ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի կողմից պատրաստուած խաղաբաժին, սկսեցին իրար հետ շփուել եւ կարծէք մի պահ մոռացան իրենց ծնողներին: Այդ ընթացքում տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն, որը պատրաստել էր դպրոցի Ծնողական Խորհուրդը:

«Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանում տեղի ունացած բացման արարողութիւնից յետոյ, ազգային մարմինների ներկայացուցիչները, գլխաւորութեամբ հոգշ. Հայր Սուրբի, մեկնեցին Ճահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» Եւ «Մասիս» դպրոց, որտեղ նոյնպէս մեծ խանդավառութիւն էր տիրում:

Նշենք, որ առաւօտեան կանուխ, Հայոց դպրոցում ներկայ էր գտնուել արժն. Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեանը, ով շնորհաւորելով նոր ուսումնական տարեշրջանը, յաջողութիւն էր մաղթել աշակերտ-ուհիներին եւ ապա միասնաբար աղօթելով «Տէրունական Աղօթք»-ը՝ նրանց առաջնորդել էր դէպի դասարանները, մինչեւ ուսումնական տարեշրջանի բացման պաշտօնական արարողութիւնը, որը տեղի ունեցաւ ժամը 11:00-ին:

Ազգային մարմինների պատուիրակութեան կողքին ներկայ եղան հայոց դպրոցի տեսուչ պրն. Ղոջաւանդը, դպրոցի ուսուցչական կազմը, Ծնողական Խորհուրդը, սաների ծնողներ ու հարազատներ:

Բացման արարողութեան սկզբում, երբ դպրոցի աշակերտ-ուհիները շարուեցին ըստ կարգի, դպրոցի տեսուչ պրն. Ղոջաւանդը բարի

գալուստ մաղթեց բոլոր աշակերտներին եւ իր ուրախութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց հոգշ. Հայր Սուրբի եւ ազգային մարմինների անդամների ներկայութեան առթիւ: Նա իր խօսքերի մէջ ասաց. «*Գնահատելի է հոգշ. Հայր Սուրբի եւ ազգային մարմինների մշտական ներկայութիւնը, որը մեծ ուժ եւ եռանդ է ներշնչում դպրոցի անձնակազմին՝ իրենց ամբողջ տարուայ աշխատանքների մէջ*»: Ապա խօսքը փոխանցեց հոգշ. Հայր Սուրբին, ով իր խօսքերի սկզբում փառք եւ գոհութիւն յայտնեց Աստծուն, որ այս տարի եւս համախմբեց բոլորին դպրոցի քաղցր ընտանեկան յարկի տակ՝ սկսելու 2013-2014 ուսումնական տարեշրջանը: Հոգշ. Հայր Սուրբը բոլորի անունից շնորհակալութիւն յայտնեց Պատգամաւորական Ժողովի եւ Թեմական Խորհրդի անդամներին, ովքեր ընդառաջելով եւ կարեւորելով Ճահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան ծրագրին՝ ընթացք էին տուել դպրոցի վերանորոգման աշխատանքին, որը գնահատելի կերպով կատարուեց Ճահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան, յատկապէս պրն. Մելքոն Շիրաանեանի գլխաւորութեամբ:

Հոգշ. Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ խօսքն ուղղեց սաներին եւ ասաց, որ բոլորը պէտք է հայոց դպրոց յաճախելով զարգացնեն իրենց մտքերն ու հոգիները եւ սովորեն, մտածեն ու խօսեն հայերէն, եւ ամենակարեւորը, իրար հանդէպ սէր ունենան: Նա այստեղ եւս բոլորին փոխանցեց առաջնորդ Սրբազան Հօր ողջոյնը, եւ վերջում իր շնորհակալական խօսքն ուղղեց դպրոցի ուսուցչական կազմին եւ Ծնողական Խորհրդին, նաեւ աշակերտների ծնողներին, ովքեր իրենց երեխաներին վստահում են հայ դպրոցին, մաղթելով բարի վերամուտ եւ մնայուն վերելք, շեշտելով, որ հայ աշակերտը պէտք է լինի միշտ լաւագոյնը:

Ծրագրի շարունակութեան մէջ Սպահանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի ներկայացուցիչ պրն. Արթին Քեշիշեանն եւս իր հերթին շնորհաւորեց աշակերտներին տարեմուտի առիթով, մաղթելով նորանոր յաջողութիւններ եւ վերելք ուսումնական ասպարէզում: Նա նշեց, որ այս տարիքում աշակերտի միակ պարտականութիւնը սովո-

րելն է, որը ոչ թէ դժուար, այլ շատ հաճելի եւ ցանկալի է բոլորին: Պրն. Քեշիշեանն ասաց, որ հայ աշակերտները պէտք է սովորեն նաեւ մեր ազգային արժէքների մասին, քանի որ հայութեանը պէտք են ազգանուէր, կրթած եւ գիտակից սերունդներ: Նա իր խօսքերի աւարտին աշակերտներին եւ ուսուցչական կազմին յաջողութիւններով լի տարեշրջան մաղթեց, իսկ Ծնողական Խորհրդին եւ ծնողներին՝ ուժ եւ կարողութիւն:

Դպրոցի հայ ուսուցիչներից պրն. Զանիկ Թահմազեանը եւս իր հերթին շնորհակալութիւն յայտնեց հոգշ. Հայր Սուրբին, ազգային մարմիների ներկայացուցիչներին, Ծահինշահարի Հայ Համայնքի Վարչութեանը եւ պրն. Մելքոն Ճիրաանեանին՝ ամռան կարճ ժամանակահատուածում դպրոցի վերանորոգման աշխատանքներն իրականացնելու կապակցութեամբ, ապա խօսքն ուղղելով աշակերտներին ասաց, որ 2013-2014 ուսումնական տարին պէտք է տարբեր լինի անցեալ տարիներից. նորոգուած դպրոցում պէտք է բոլորը ներկայանան հոգեպէս ու մտաւորապէս վերանորոգուած, եւ ամէն օր առաւել քան երբէք նոր գիտելիքներով լիցքաւորուած տուն վերադառնան:

Արտայայտութիւններից յետոյ հոգշ. Հայր Սուրբի ձեռամբ հնչեց 2013-2014 ուսումնական տարեշրջանի առաջին զանգը եւ բոլոր աշակերտները դասարան մտան՝ իրենց աշխատանքներն սկսելու:

Բացման ծրագրից յետոյ հայոց դպրոցի փոքր սրահում Ծնողական Խորհրդի միջոցով տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն՝ ազգային մարմինների ներկայացուցիչների, հայոց դպրոցի տեսչութեան եւ ուսուցչական կազմի ներկայութեամբ: Հիւրասիրութեան ընթացքում Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ պրն. Նոէլ Մինասեանը ներկաներին փոխանցելով իր շնորհաւորանքներն ու բարեմաղթանքները նորամուտի առթիւ, շեշտեց, որ ինչպէս միշտ յատուկ ուշադրութիւն պէտք է դարձնել հայոց դպրոցներում նպատակաուղղուած եւ հայեցի ճիշտ դաստիարակութիւն ճամբելու կարեւոր եւ կենսական աշխատանքին: Նա նշեց, որ հայոց դպրոցի իւրայատկութիւններից կարեւորագոյնները երկուսն են. առաջին՝ կատարեալ եւ բարձր մակարդակի կրթութիւն մատակարարել աշակերտութեանը եւ երկրորդ՝ հայեցի դաստիարակութիւն փոխանցել նրանց՝ բազմակողմանի միջոցներով եւ հնարաւորութիւններով, քանի որ առանց այս երկու պարագաների, հայոց դպրոցը կը նմանուի բազմաթիւ այլ հասարակ կրթարանների:

Պրն. Մինասեանը հայոց դպրոցի գործունէութիւնը ճիշտ հունի վրայ պահելու համար կարեւոր համարեց բոլոր ուժերի միատեղ եւ համադրուած աշխատանքը եւ իր վստահութիւնը յայտնեց, որ հոգշ. Հայր Սուրբը, Ծահինշահրի Հայ Համայնքի Վարչութիւնը եւ դպրոցի անձնակազմն իրենց լաւագոյնն են կատարելու այս ուղղութեամբ:

Յաջորդիւ, Կրթական Խորհրդի անդամ պրն. Արթին Քեշիշեանը խօսքն ուղղելով դպրոցի տեսուչ պրն. Ղոջաւանդին, շնորհակալութիւն յայտնեց նրան՝ անցեալ տարիներում իր մատուցած ծառայութիւնների համար, եւ շնորհաւորելով ուսումնական նոր տարեշրջանի առթիւ, յոյս յայտնեց, որ գալիք տարում եւս դպրոցը վայելելու է նրա փորձառու եւ բարձր մակարդակի տնօրինութիւնը, շեշտելով, որ դպրոցական աշխատանքների իրականացման համար առհասարակ ազգային մարմինները եւ յատկապէս Կրթական Խորհուրդն ամենիմաստ զօրակցելու են դպրոցի աշխատակազմին եւ ակնկալում են նորանոր յաջողութիւններ եւ վերելք:

ՀՐԱԺԵՇՏ ԵՒ ԲԱՐԻԵՐԹ ԱՐԺՆ. Տ. ՎԱՐԴԱՆ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱԲԱԲԱՅԵԱՆԻՆ

Կիրակի՝ 2013 թւականի հոկտեմբեր 7-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Շահինշահիրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում մատուցւեց սուրբ եւ անմահ Պատարագ, որին նախագահում էր Սպահանի Հայոց Թեմի թեմական առաջնորդ գերշ. Տ. Բաբգէն եպս. Զարեանը: Շահինշահիրի համայնքի անդամները ներկայ էին՝ հրաժեշտ տալու իրենց համայնքի հոգեւոր հովիւ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանին, որն իր վերջին Պատարագը պիտի մատուցէր Շահինշահիրում, իբրեւ համայնքի հոգեւոր հովիւ: Արժն. Տէր Հօրը մէկ ու կէս տարի առաջ թեմական առաջնորդը, Կրօնական Խորհրդի, Շահինշահիրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանի ու Շահինշահիրի Հայ Համայնքի Վարչութեան հետ համախորհուրդ ձեռնադրեց որպէս քահանայ եւ ժամանակաւորապէս նշանակեց Շահինշահիրի հոգեւոր հովիւ: Նա այժմ նշանակւել է Նոր Ջուղայի Ս. Մինաս եւ Ս. Ներսէս եկեղեցիների հոգեւոր հովիւ:

Սոյն Պատարագին ներկայ էին Շահինշահիրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, Կրօնական Խորհրդի նախագահ պրն. Արշալոյս Խուդաւերդեանը, Շահինշահիրի Հայ Համայնքի Վարչութեան եւ համայնքի անդամները: Պատարագին յաւուր պատշաճի քարոզեց գերշ. Սրբազան Հայրը՝ բնաբան ունենալով Մարկոսի Աւետարանի 11.27-33 համարները, եւ ասաց. «*Հարցրեցին Յիսուսին թէ՝ ո՞ւմ իշխանութեամբ է անում այս բոլոր գործերը, իսկ Նա հարցին հարցով պատասխանեց եւ ասաց. "Յովհաննէս Մկրտիչն ո՞ւմ իշխանութեամբ էր մկրտում. մարդկա՞նց", եւ նրանք ոչ մի բան չպատասխանեցին: Աստուածորդին աշխարհ եկաւ, որ մարդկանց ցոյց տայ ճշմարիտ լոյսի ճանապարհը: Նա աշխարհ եկաւ մեղաւոր մարդկանց փրկելու եւ ձերբազատելու իրենց մեղքերից ու նրանց առաջնորդի դէպի անմեղութիւն, փրկութիւն եւ յաւիտենական ուրախութիւն: Նա հրաշքներ գործեց երկրի վրայ, որ ցոյց տայ ճշմարիտը. պէ՛տք է հաւատալ Նրան, իսկ երբ հաւատանք՝ կը հասկանանք թէ ի՛նչ աստուածային իշխանութեամբ է կատարում Իր բոլոր գործերը եւ այդ իշխանութիւնը տրւում է իւրաքանչիւր եկեղեցականի՝ որպէս շնորք, կոչում եւ իշխանութիւն՝ քարոզելու, Աւետարանը բացատրելու*»:

Սրբազան Հայրն իր քարոզն աւարտելուց յետոյ, յայտնեց հաւատացեալներին, թէ Շահինշահիրի հոգեւոր հովիւ արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը որպէս օգնական հոգշ. Հայր Սուրբի կողքին ծառայելուց յետոյ, այժմ պէտք է տեղափոխւի Նոր Ջուղա, Ս. Մինաս եւ Ս. Ներսէս եկեղեցիներում ծառայելու՝ իբրեւ այդ եկեղեցիների ժողովրդի հոգեւոր հովիւ: «*Նայե՛նք Քրիստոսին եւ օրինա՛կ վերցնենք Նրանից, ապրե՛նք Քրիստոսով եւ անմեղութեա՛մբ ու մաքուր հոգով նւիրւենք Նրան*»,- այս գեղեցիկ խօսքերով Սրբազան Հայրը փակեց իր քարոզը:

Սուրբ Պատարագը տեւեց մինչեւ ժամը 12:00-ը, որից յետոյ Շահինշահիրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա Վրդ. Գուճանեանի եւ Համայնքի Վարչութեան նախաձեռնութեամբ, Հայ Կանանց Եկեղեցասիրաց Միութիւնը «Սրբոց Վարդանանց» դպրոցի փոքր սրահում, արժն. Տէր Հօր պատուին պատրաստել էր համեստ հիւրասիրութիւն, որի ընթացքում նախ Շահինշահիրի Հայ Համայնքի անդամ պրն. Արմոնդ Հախնազարեանը շնորհակալական խօսքեր ուղղեց արժն. Տէր Հօրը՝ իր ծառայութեան համար եւ մաղթեց ուժ, կորով եւ կանաչ ճանապարհ՝ իր ծառայական կեանքի համար, ապա Վարչութեան նախագահ պրն. Մելքոն Շիրաւ-

Շարունակութիւնը՝ 34-րդ էջում

ԾՈՂԱՊՏՈՅՏ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՈՒՑ ԱՌԻԹՈՎ

Շաբաթ՝ 2013 թւականի հոկտեմբերի 9-ի առաւօտեան, Շահինշահիր Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի սաներն այցելեցին «Կանանց Այգի». ծրագիրը կազմակերպել էր դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի կողմից «Մանուկների Համաշխարհային Օր»-ւայ առիթով:

Մօտ երկու ժամ սաները ազատ ու հանգիստ վայելեցին բնութեան գրկում՝ ուրախացան, իրենց ուսուցչուհիների հետ գնդակ խաղացին ու հեքիաթ պատմեցին:

Վերջում սաները ուսուցչուհիներից ստացան հայկական մանկական երգի խտասալիկ, ապա վայելեցին Ծնողական Խորհրդի կողմից պատրաստուած պատառները եւ ուրախ տրամադրութեամբ վերադարձան իրենց տները:

ՀԱՅԱԿԱՀՈՐԴԵՐԻ ՏՕՆԸ ՇԱՀԻՆՇԱՀԻՐ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ



Նախաձեռնութեամբ Շահինշահիր Հայոց Ազգային «Նարեկ» Մանկապարտէզ-Նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական Խորհրդի, երեքշաբթի՝ 2013 թւականի հոկտեմբերի 15-ի առաւօտեան նշուեց «Հասակաւորների Տօն»-ը:

Մանկապարտէզ-Նախակրթարանի սաները իրենց դաստիարակների տարած ջանքերի շնորհիւ շատ կարճ ժամանակահատուածում պատրաստել էին գեղեցիկ եւ համեստ գեղարուեստական ծրագիր: Երեխաները մեծ ուրախութեամբ եւ անհամբերութեամբ էին սպասում ծրագրի պահին. նրանք իրենց տատիկներին եւ պապիկներին պէտք է նուիրէին իրենց երգերն ու ասմունքները:

Ծրագրի բացումը կատարեց դպրոցի տեսչուհի տկն. Ալիս Մկրտչեանը՝ բարի գալուստ մաղթելով սաների տատիկներին ու պապիկներին եւ շնորհաւորելով նրանց տօնի կապակցութեամբ, նշեց նրանց կարեւորագոյն դերը երեխաների կեանքի մէջ, ապա բոլորին հրաւիրեց ունկնդրելու մանուկների կողմից պատրաստուած ծրագիրը:

Սաները խանդավառութեամբ լեցուն կատարեցին «Շատ է յոգնել իմ տատիկը», «Ուրախ ժամանց», «Սիրում եմ սիրում տատիկիս անգին», «Դպրո՛ց, դու մեր սիրասուն» եւ «Աշուն» երգերն ու արտասանութիւնները, որոնք մեծ յուզմունք եւ ուրախութիւն առաջացրին տատիկ-պապիկների մօտ:

Գեղարուեստական բաժնի աւարտին սաները տատիկ-պապիկների հետ գրկախառնուեցին եւ շնորհաւորեցին նրանց իրենց տօնի կապակցութեամբ, ապա տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն որը պատրաստուել էր Ծնողական Խորհրդի կողմից:

Ծնողական Խորհուրդը գեղեցիկ մտայղացումով՝ պատրաստել էր սաների նկարներով շրջանակ, որոնք նուիրուեցին տատի-պապիկներին:

Ծրագրի աւարտին երեխաները նկարահանուեցին իրենց տատիկ-պապիկների հետ:

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՇԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ

Շաբաթ՝ 2013 թւականի հոկտեմբերի 12-ի առաւօտեան, Շահինշահրի Հայոց Ազգային «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում տեղի ունեցաւ սուրբ եւ անմահ Պատարագ Ս. Թարգմանչաց Տօնի առիթով: Պատարագիչն էր Շահինշահրի հոգեւոր տեսուչ հոգշ. Տ. Անանիա վրդ. Գուճանեանը, իսկ Պատարագի երգեցողութիւնը կատարում էր Շահինշահրի «Նարեկ» երգչախումբը: Շահինշահրի համայնքի անդամները, ուսուցիչները եւ հայոց դպրոցների աշակերտ-ուհիները ներկայ էին Ս. Պատարագին:

Պատարագի ընթացքում հոգշ. Հայր Սուրբի գեղեցիկ քարոզն սկիզբ առաւ «ՃԱՆԱՉԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԽՐԱՏ ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ» աստուածաշնչական համարով՝ հայերէն տառերով թարգմանուած առաջին իմաստալից նախադասութեամբ: Պատարագիչ Հայր Սուրբը նշեց, որ 406 թւականին Ս. Մեսրոպ Մաշտոցը յեղաշրջեց հայ ժողովրդի կեանքը եւ Աստծու կամքով եւ առաջնորդութեամբ յօրինեց մեր սրբատառ Այբուբենը: Նա իր խօսքն ուղղելով աշակերտ-ուհիներին, ասաց. «*Հայ աշակերտը միշտ եւ միշտ պէտք է խօսի, գրի, երգի եւ ամենակարեւորը աղօթի հայերէնով, որովհետեւ հայերէնը սուրբ լեզու է, քանզի այն մեզ տրւել է Աստծու կողմից*»: Նա շեշտեց, որ Թարգմանիչ Վարդապետների եւ հայոց գրերի շնորհիւ է, որ հայ աշակերտը հայ է եւ յաճախում է հայ դպրոց: Հոգշ. Հայր Սուրբը երեք կարեւոր կէտեր նշեց՝ հայ աշակերտի համար իբրեւ կարեւորագոյն խնդիրներ. առաջինը՝ ապրել հայօրէն եւ մնալ հայ, երկրորդ՝ կապւել հայերէնին, խօսել եւ աղօթել հայերէնով եւ երրորդ՝ յարգել մեր սուրբերին եւ մեծերին: Շարունակելով իր խօսքը, նա ընդգծեց, որ հայ աշակերտը երբէք իր խօսակցութեան մէջ չպէտք է օգտագործի այլ լեզուներ, մանաւանդ պարսկերէն բառեր, այլ պէտք է փորձի միշտ խօսել մաքուր հայերէնով, լաւապէս իւրացնի մեր կրօնը եւ լաւատեղեակ լինի հայոց պատմութեան մասին. այդպիսով հայ ծնողը կարող է հպարտանալ իր զաւակով: Նա շեշտեց թէ հայ աշակերտը տարբերւում է ուրիշ դպրոցներ յաճախող աշակերտներից իր ճակատին քսւած Ս. Միւռոնով, որն արտայայտում է այն սրբութիւնը, որ մեզ է հասել մեր հայրերից եւ սուրբերից:

Հոգշ. Հայր Սուրբը կոչ ուղղելով աշակերտներին, ասաց. «***Մենք ձեզ մէջ տեսնում ենք պատկերը մեր աւետարանիչների, Ս. Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթեւի եւ սուրբ հայրապետների, որով կարող էք պահպանել մեր լեզուն, կրօնը եւ Այբուբենը: Դուք պիտի լինէք վաղւայ մեր հայերէն դասաւանդող ուսուցիչները, հայերէն աղօթող դպիրները, սարկաւակները եւ հոգեւորականները***»:

Վերջում հոգշ. Հայր Սուրբն իր եւ Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութեան անունից շնորհաւորեց ուսուցիչներին, աշակերտներին եւ ծնողներին Թարգմանիչ Վարդապետների Տօնը, աղօթելով որ մեր սուրբերից փոխանցւած կամքը, յոյսը, սէրն ու հաւատը նրանց կեանքում մնայուն տեղ եւ դեր ունենան, եւ մեր սուրբ հայրերը իւրաքանչիւրիս համար բարեխօս լինեն Աստծու մօտ եւ աղօթեն որպէսզի մենք էլ ճանաչենք իմաստութիւնը, ընդունենք խրատը եւ մեր մեծերի խօսքը լսելով՝ մեր կեանքն ապրենք հայօրէն, հայի նկարագրով, եւ Յիսուս Քրիստոսի առաջնորդութեամբ յենւենք ու կառչած մնանք մեր եկեղեցու աւանդութիւններին եւ սրբութիւններին:

Ապա բոլոր ներկաները միասնաբար աղօթեցին «Հայր Մեր»-ը եւ վերջում աշակերտ-ուհիներն ու բոլոր ներկաները ստացան Ս. Հաղորդութիւն եւ նորոգւած հոգիներով վերադարձան իրենց տները:

Շարունակութիւն՝ 17-րդ էջից

Ð²Ú àôêàôòâÆØº Ì²ðØ²Ü ºðº ÎàÚ...

ենք մեր ուսուցիչներին՝ սկսեալ մանկապարտէզից մինչեւ ամենաբարձր մակարդակի ուսուցիչները։ Հայ ուսուցիչները նոյնն են, քանի որ նոյն առաքելութիւնն ունեն՝ հայեցի կրթութիւն մատուցելու, հայեցի ոգի ներշնչելու եւ ջերմութիւն փոխանցելու գործում»: Սրբազան Հայրն իր խօսքի աւարտին կարեւորելով ուսուցիչների համընթաց քայլելը զարգացող գիտութեան հետ՝ բարձր գնահատեց Նոր Ջուղայի եւ Շահինշահիր հայոց ազգային դպրոցների ուսուցիչների կատարած աշխատանքը եւ նրանց յորդորեց շարունակել իրենց յաղթական երթը նոյն նւիրումով, սիրով ու զոհողութեամբ:

Միջոցառման աւարտին տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ «Քանանեան» եւ «Կատարինեան» դպրոցների Ծնողական խորհուրդների կազմակերպութեամբ:

Շարունակութիւն՝ 26-րդ էջից

ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՓԱՅՏԷ ՉԵՌԱՐՒԵԱՏՒ...

Ցուցահանդէսն իր աշխատանքի երեք օրերի ընթացքում մեծ ընդառաջում գտաւ արւեստասէր ու արւեստագէտ հայ եւ պարսիկ այցելուների կողմից, որոնց առիթ ընձեռւեց մօտկից ծանօթանալու բազմաշնորհ հեղինակների գեղեցիկ ստեղծագործութիւններին եւ արւեստի նկատմամբ իւրայատուկ ընկալումներին: Այցելուներն առիթ ունեցան նաեւ զրուցելով հեղինակների հետ՝ օգտւել նրանց մասնագիտական բացատրութիւններից ու խորհուրդներից:

Շարունակութիւն՝ 31-րդ էջից

ՀՐԱԺԵՇՏ ԵՒ ԲԱՐԻ ԵՐԹ...

նեանը Վարչութեան անունից մի յուշանւէր նւիրեց արժն. Տէր Հօրը:

Կրօնական Խորհրդի ատենապետ պրն. Արշալոյս Խուդաւերդեանն արտայայտւելով՝ նշեց թէ հոգեւորականի կեանքում միշտ էլ լինում են այսպիսի պահեր, երբ փոխւում է նրանց ծառայական վայրը, սակայն նպատակը նոյն է՝ ծառայել եւ առաջնորդել ժողովրդին: Նա շեշտեց, որ շուտով նոր քահանայ կը նշանակւի Շահինշահիրի համայնքի համար: Պրն. Խուդաւերդեանն եւս իր հերթին ուժ, կարողութիւն եւ յաջողութիւն մաղթեց արժն. Տէր Հօրը:

Արժն. Տէր Հայրն իր հրաժեշտի խօսքի մէջ ասաց թէ հրաժեշտ առնելը շատ դժւար է իր համար, որովհետեւ 1.5 տարի սարկաւագութեան եւ 1.5 տարի քահանայութեան շրջանը բաւական էր, որպէսզի խիստ կապւէր դպիրների եւ համայնքի անդամների հետ: Նա ուրախութեամբ արտայայտւեց Շահինշահիրի ջերմ մթնոլորտում ծառայելու մասին եւ իր խորին շնորհակալութիւնները յատնեց հոգշ. Հայր Սուրբին, Շահինշահիրի Հայ Համայնքի Վարչութեանը, «Նարեկ» Երգչախմբին՝ եկեղեցական արարողութիւններում մշտական մասնակցելու, Հայ Կանանց Եկեղեցասիաց Միութեան եւ համայնքի անդամներին՝ իրենց ջերմ եւ բարեկամական վերաբերմունքի համար: Պրն. Արմոնդ Հախնազարեանն առիթը պատեհ համարելով՝ բոլորի անունից շնորհակալութիւն յայտնեց նաեւ Ռազմիկ սրկ. Գալստանեանին՝ Տէր Հօր կողքին ծառայելու համար:

Վերջում գերշ. Սրբազան Հայրն իր հայրական խօսքը փոխանցելով՝ ասաց. «***Այնպէս ինչպէս Քրիստոս աստուածային իշխանութեամբ էր գործում, հոգեւորականը եւս աստուածային կոչումով, իշխանութեամբ, շնորքով եւ պաշտօնով ծառայում է մեր եկեղեցուն եւ ժողովրդին***»: Ապա գնահատելով Տէր Հօրը, շարունակեց. «***Աստուած նրա բոլոր քայլերն առաջնորդի դէպի բարին եւ ճշմարիտը, եւ թող երկար տարիների անկեղծ նւիրումով ծառայի Նոր Ջուղայի Ս. Մինաս եւ Ս. Ներսէս եկեղեցիների ժողովրդին***»: Ապա Սրբազան Հօր առաջնորդութեամբ, բոլոր ներկաները յոտնկայս միասին երգեցին «Կիլիկիա» երգը:

Ս. Ա. Վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի հիմնական վերանորոգութիւններ

Ուրախութեամբ տեղեկացնում ենք, որ արագ թափով ընթացքի մէջ է Ս. Ամենափրկչեան Վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի վերանորոգումը: Աշխատանքի ծախսերը գոյացել են Իրանի մեծ ֆիզիկոս հանգուցեալ Ալէնուշ Տէրեանի կողմից իր ծնողների յիշատակին կատարուած կտակի հիմամբ, որոնց անւամբ է կոչւելու գրադարանի բաժիններից մէկը:

Վերանորոգման աշխատանքների աւարտից յետոյ գրադարանը ընթերցասէր մեր հասարակութեան համար իր դռներն է բացելու նոր դասաւորութեամբ եւ յարմարութիւններով:

Հարկ է նշել գրադարանը տասնամեակներից յետոյ ենթարկւում է հիմնական վերանորոգման, որի հետ միաժամանակ կատարւում են գրքերի վերադասաւորման եւ նոր հնարաւորութիւններով օժտելու աշխատանքը:

Սեպտեմբեր 2013
Ս.Ա. Վանք

Սպասաւոր Հայոց Թեմի
Թեմական խորհուրդ

ՆՒՒԹԱՏՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Զ.Հայոց Առաքելական Եկեղեցեայ Վարչութիւն

Ս. Գէորգ եկեղեցի

- 5,000,000 ռիալ. Յարո եւ Ժասմէն Այլազեաններ՝ իրենց ծնողների՝ Եղնազար եւ Աստղիկ Այլազեանների յիշատակին:
- 3,290,000 ռիալ. Շայան:
- 1,000,000 ռիալ. Ռիթա եւ Հիլդա Մարկոսեաններ՝ իրենց մօր՝ Սալբի Մարկոսեանի յիշատակին:
- 900,000 ռիալ. Միռ-Մուսաւի:
- 550,000 ռիալ. Նազարի:
- 500,000 ռիալ. Արէն Դաւթեան:
- 300,000 ռիալ. Արշիկ Փուլադեան:
- 200,000 ռիալ. Ալի-Փուռ:
- 50,000 ռիալ. Մասիս եւ Արեւիկ Յովսէփեաններ՝ Վարդավառի տօնի առթիւ:

Խաչի ցոյգելու փոխան

-1,000,000 ռիալ. Արբի եւ Մելինէ Բաբումեաններ:
- 300,000-ական ռիալ. Ծաղկուշ Համբարչեան, Յասմիկ Շահիջանեան, Արփինէ եւ Արամէ Նաւասարդեաններ, Նայիրի եւ Նինարէ Մարկոսեաններ, Էմմա Զոհրաբեան:
- 200,000 ռիալ. Աղլեն Հայրապետեան:
- 150,000 ռիալ. ոմն:
- 100,000 ռիալ. Վաչէ Սոհրաբեան, Իսրայէլեաններ, Աշարի, Արփա եւ Արէն Մարգարեաններ, Լուսիկ Մարկոսեան, Մելիքեան, ոմն:

Զանազան

- 14 հատ արծաթեայ խաչ. տէր եւ տկն. Իսրայէլեաններ:
- 500,000 ռիալ. Սուրէն Սէթ-Աղայեան:
- 200,000 ռիալ. Մաքրուհի Մարկոսեան՝ Վայլէթ Յովսէփեանի յիշատակին:
- 100,000 ռիալ. Սաթօ Աւետումեան՝ Ս. Սարգիս եկեղեցուն, Սոնիկ Աղախանեան, Օֆիկ Փուլադեան:
- 50,000 ռիալ. Հայկուշ Հայրապետեան՝ Ս. Սարգիս եկեղեցուն, Սիլւա Աղախանեան՝ Ս. Յովհաննու եկեղեցուն:

Ս. Աստուածածին եկեղեցի (Խաղողօրհնէքի առթիւ)

- 600,000 ռիալ. Այդա Խուդաբախշեան:
- 500,000-ական ռիալ. Պօղոս Թահմազեան, Մաոիեթ Խոջեմալ, Վիգէն Սարգսեան:
- 200,000-ական ռիալ. Սեդա Այլազեան, Հրաչիկ Ղարիբեան, Նարեկ եւ Նինել Օրոջեաններ, Լորեթա Միրզայեան, Անահիտ Օհանեան, Նորիկ Յարութիւնեան, Վարուժ Մարկոսեան, Արգիշտի եւ Նանէ Մարգարեաններ:
- 150,000-ական ռիալ. Սօսէ, Սիւնէ եւ Սարինէ Ղարիբեաններ, Մարօ Բաղումեան:
- 130,000 ռիալ. Անիթա Ալեքսանդրեան:
- 100,000-ական ռիալ. Սոնիկ Կիրակոսեան, Աղաւնի Մարկոսեան, Վահիկ Ծատրեան, Ռայմոնդ եւ Քարմէն Ղարախանեաններ, Վահէ, Վանէ եւ Անի Տէր Մարտիրոսեաններ:

Ս. Ստեփանոս եկեղեցի (Խաղողօրհնէքի առթիւ)

- 500,000 ռիալ. Անի Քրիստին եւ Արենի Աղաբաբայեաններ:
- 400,000 ռիալ. Արփի Շիրւանեան:
- 300,000 ռիալ. Էմմա Զոհրապեան, Լիդա Թահմազեան:
- 200,000 ռիալ. Գառնիկ Մելիքեան, Մարալ Խաչիկեան:
- 150,000-ական ռիալ. Միրօ Խաչիկեան, Լալա Բաղդասարեան, Ալվարդ Զարգարեան, Անդրանիկ Շահբազեան:
- 110,000 ռիալ. ոմն:
- 100,000-ական ռիալ. Արուսեակ Քեշիշեան, Բալաս Ղարիբեան, Մարինա Ղարախանեան, Աւուկ եւ Սանդրա Խուդաբախշեաններ, Վարուժ եւ Սթելա Վարդանեաններ, Ժանեթ Աղախանեան, Անուշաւան եւ Հրանուշ Աղաբաբայեաններ, Անիթա Աբգարեան, Էլսիկ Պետրոսեան, Անգինէ Մարգարեան, Վազրիկ Վարդանեան, Լիդա Ծառուկեան, Խաթուն Մարգարեան, Արաքս Բաղումեան, Սինթիանա Պօղոսեան, Օդեթ եւ Թանգիկ Բաղդասարեաններ, Լորիկ Բաղդասարեան, Այդա Կիրակոսեան, Աշխէն Բաղրամեան, Օհան Ղարախանեան:
- 80,000 ռիալ. Աբգար Ղազարեան:
- 60,000 ռիալ. Եղսօ Մկրտչեան:
- 50,000-ական ռիալ. Էջմին եւ Էդնա Օհանեաններ, Մաոիեթ Բաղդասարեան, Հայկանուշ Հայրապետեան, Ղազար եւ Արաքս Թահմազեաններ, Հռիփսիկ Թորոսեան:

Ս. Յովհաննու եկեղեցի (Խաղողօրհնէքի առթիւ)

- 1,000,000 ռիալ. Վազրիկ Մարկոսեան:
- 500,000 ռիալ. Գառնիկ եւ Արմինէ Կիրակոսեաններ:

- 300,000 դրամ. Լէօ եւ Անգինէ Սարեաններ:
- 200,000-ական դրամ. Հերոս Սիմոնեան, Տիգրանուհի Մանսուրեան, Իշխանուհի Քալանթար Օհանեան՝ Մարօ Ղազարեանի անւան տօնի առթիւ, Անդրանիկ Ասատրեան, Մաքրուհի Մարկոսեան՝ Սալբի Մարկոսեանի յիշատակին:
- 160,000 դրամ. Մարջան Մինասեան:
- 150,000-ական դրամ. Ծաղկուշ Աղազարեան, Անդրանիկ Յովսէփեան, Մանուշ Մարգարեան:
- 100,000-ական դրամ. Արազ Մարտիրոսեան, Մխիթար եւ Միրօ Խուդաւերդեաններ, Սերոժ Աւանէսեան, Հրաչ Մուրադեան, Հրանուշ Յակոբեան, Անիթա Յովսէփեան, Արա Աւանէսեան, Յարութ Ղարիբեան, Յարօ Այւազեան, Անդրանիկ եւ Անահիտ Յարութիւնեաններ, Անահիտ Իսաղուլեան, Ծովինար Լալազարեան, Լուսիկ Տէր Ստեփանեան, Սաթօ Աւետումեան, Թալին Կարապետեան, Սրբուհի Ալեքսանդրեան, Ռիմա Դիլանչեան, Արաքս Աւանէսեան, Հրակ Ղուկասեան, Ռուբինա Շահմիրզայեան, Միգանուշ Հայրապետեան, Վարուժ Օրոջեան, ոմն:
- 90,000 դրամ. Բագրատ Ղազարեան:
- 60,000 դրամ. Պայծառ Թահմազեան:
- 50,000-ական դրամ. Վազգէն Խուդաւերդեան, Արմինէ եւ Վրէժ Տէր Յովհաննիսեաններ, Շահբազխան Անջուլեան, Անժել Յակոբեան, Անահիտ Յակոբեան, Սերլի Պարսամեան:

Ս. Մինաս եկեղեցի (Խաղողօրհնէքի առթիւ)

- 100,000-ական դրամ. Թադէ, Թէոդիկ եւ Դիոն Վարդանեաններ, Նայիրի Շահիջանեան, Եզնիկ Ղարիբեան, Մաթէոս Պարսամեան, Անիկ Ալեքսանդրեան, Մարգարիտ Զարգարեան:
- 50,000 դրամ. Տիգրանուհի Թորոսեան:

Ս. Գէորգ Զօրավարի տօնի առթիւ

- 1,000,000-ական դրամ. Շահինշահրի Հայ Համայնքի Վարչութիւն, Տ. Վազգէն քհնյ. Քէօշկէրեան, Անուշ եւ Մատթէոս Անդրիասեաններ, Վահէ, Վանէ եւ Անի Տէր Մարտիրոսեաններ, Արէն Դաւթեան, Սաշա Մելքոմեան, Ռեբեքա Կարապետեան, Ռուբէն Խեզերեան, Տիգրանուհի Ղեւեան, Ծաղկուշ Համբարձեան, Ծաղկուշ Դանէլեան, Սուրէն Դիլանչեան, Գայիանէ Գէորգեան:
- 700,000 դրամ. Երանուհի Բարդուղեան՝ իր ամուսնու՝ Բարդուղ Բարդուղեանի յիշատակին:
- 500,000-ական դրամ. Տ. Մեսրոպ քհնյ. Գալստեան, Ռիմա Սէթ-Աղայեան, Ուրֆա Անդրիասեան, Վահիկ եւ Անի Թորոսեաններ, Արբի, Թալին եւ Էմին Թորոսեաններ, Կարինէ Զարգարեան, Անդրանիկ եւ Անահիտ Յարութիւնեաններ, Օննիկ եւ Գառնիկ Յարութիւնեաններ, Մադլէն Ղարիբեան, Լիդա եւ Սեդա Մկրտչեաններ, Հերմոնդ եւ Արսինէ Յարութիւնեաններ, Ժորժ եւ Թելմա Հայրապետեաններ, Սեւակ Թորոսեան եւ Անահիտ Ծատրեան, Արտիկ Մելքոմեան, Ռիմա Մելքոմեան, Ալեքսանդր Մինաս Խաչիկեան, Գառնիկ Յովհաննիսեան, Սերժիկ, Կարէն եւ Փաթրիկ Յարութիւնեաններ, Սերոժ եւ Մարօ Տէր Յովհաննիսեաններ՝ իրենց եղբօր բուժման առթիւ, Էլենա Բաբումեան, Սերոժ Շահիջանեան, Կարօ եւ Անդրանիկ Յովսէփեաններ, Թենի Մկրտչեան, Հուրիկ Մկրտչեան, Մանէ Բարսեղեան, Պօղոս Թահմազեան՝ Արմենուհի Թահմազեանի յիշատակին, Սոնիա Քամարզարեան, Էրուին Աւետեան, Փաթրիկ եւ Մառիթա Սահակեաններ, Զաւէն Այւազեան, Արին Նազարեան, Ժանեթ Այւազեան, Մառիթա Խոջեմալ, Թէա Թահմազեան, Ասպետ Վարդումեան, Անահիտ Իսմայիլեան, Ռազմիկ եւ Աստղիկ Դիլանչեաններ, Համիկ, Մեղմիկ եւ Թանգիկ Միրզախանեաններ, ոմն:
- 400,000 դրամ. Առլեն եւ Արբի Հայրապետեաններ:
- 300,000-ական դրամ. Անդրանիկ Բունիաթեան, Ռաֆիկ Թորոսեան, Անի եւ Թենի Շահիջանեաններ, Գեւիկ Խաչատրեան, Սինթիա Պօղոսեան, Մաքրուհի Մարկոսեան, Անահիտ Փիլոսեան, Քարմէն Ղեւեան՝ Երուանդ Ղեւեանի յիշատակին, Ժենիա Կիրակոսեան, Ռազմիկ Յովսէփեան, Թադէ Աղազարեան, Յոլակ Յարութիւնեան:
- 250,000-ական դրամ. Սերժիկ եւ Ալենուշ Ասատրեաններ, Սեդրակ Պետրոսեան:
- 200,000-ական դրամ. Սուրիկ Փանոսեան, Ռաֆֆի եւ Արսինէ Թորոսեաններ, Թադէ եւ Թոմիկ Գալստեաններ, Կարէն եւ Մառինա Ղարախանեաններ, Թորոս Ղազարեան, Գալստան Սարուխանեան, Լորեթա Գալստեան, Շաքէ Բաբումեան, Նարեկ Յովսէփեան, Ալվարդ Զարգարեան, Մարօ Սիմոնեան, Ղուկաս Հայրապետեան, Միրօ Աբդալեան, Վրէժ Տէր Աւանէսեան, Վարուժ եւ Ստելա Վարդանեաններ, Մհեր եւ Վեհանուշ Խուդաբախշեաններ, Արաքս Բարսեղեան, Արսէն Շահբազեան, Քառոլին Սիմոնեան, Թալին Կարապետեան, Արմոնդ Աղախանեան, Լիդա Պետրոսեան, Սուրէն Ղազարեան, Շիրակ Յովսէփեան, Ռուբինա Նաւասարդեան, Խաթունիկ Յովսէփեան, Հրաչիկ Իւնիքեան, Դիանա Ղարախանեան, Արմինէ Թորոսեան, Ֆրիդա Քեշիշեան, Գայիանէ Համբարձեան, Նայիրի Մարկոսեան, Նորուիկ Մարկոսեան, Նինարէ Մարկոսեան, Իւեթ Շիրուանեան, Անիթա Յովսէփեան, Սիմիկ Ղարախանեան, Արաքս Աւետեան, Զաւէն Ղարիբեան, Երեմ եւ Մագի Յարութիւնեաններ, Հայկ Սարեան, Ժանեթ Աղախանեան, Մոնթէ Խաչատրեան, Տաթեւ Քեշիշեան, Ժանօ Կիրակոսեան, Հերմինէ Թահմազեան, Յարութ Կիրակոսեան, Սեւակ Առաքելեան, Վեդի Օրոջեան, Քրիստ Դիլանչեան, Վարդուշ Յովսէփեան, Գառնիկ եւ Օդեթ Բաղդասարեաններ, Արսինէ, Անի եւ Արբի Բունիաթեաններ, Հրաչ Մովսիսեան, Գէորգ Յովսէփեան, ոմն (2 պարագայ):
- 160,000 դրամ. Գալիա Յովսէփեան:
- 150,000-ական դրամ. Վարուժ Փանոսեան, Ալֆրէդ Միրզայեան, Նարբէյ Մկրտչեան, Նայիրի Շահիջանեան, Ծովիկ Իսախանեան՝ Սուրիկ եւ Աւօ Մկրտչեանների յիշատակին, Արաքս Ծառուկեան, Էջմին Խաչիկեան, Անի, Արփի, Արգիշտի եւ Վեդի Ղազարեաններ, Մագի Հայկունեան, Ռադիկ Նահապետեան, Մայա Նահապետեան, Քնարիկ Վարդումեան, Նիք-Փուռ:
- 100,000-ական դրամ. Մարօ Սէթ-Աղայեան, Այւազեան, Արուին Շահվերդեան, Արմինէ Աւետեան, Մուշեղ եւ Բալասան Ղարիբեաններ, Մարտիկ Նազարեան, Դերենիկ Աղախանեան, Նուարդ Դեհբաշեան, Վահէ եւ Արեգա Յարութիւնեաններ, Էդնա Բաբումեան, Մովսէս Ստեփանեան, Ովսան Ստեփանեան, Մառիթա Սարուխանեան, Ադիս Թորոսեան, Անեթ Ղազարեան, Մասիս Հայրապետեան, Գայիանէ Մինասեան, Խաթունիկ Խաչիկեան, Մասիս Հայրապետեան, Մհեր Խանլարեան, Լուսիա եւ Մարտին Գալստեան, Շուշիկ Փանոսեան-Ղազարեան, Արմոնդ Մինաս Խաչիկեան, Իւղաբեր Մանուկեան, Արտեմիս Խաչատրեան, Էլենա Խանլարեան, Նուարդ Բունիաթեան, Նուարդ Աւետեան, Մարօ Ծատուրեան, Ժանեթ Եսայի, Սեդա Բալեան, Սալիկ Մարտիրոսեան, Այլին Բաբայեան, Անի Թորոսեան, Լորիկ Բաղդասարեան, Թորգոմ Բարսեղեան, Անգինէ Պօղոսեան, Հրանուշ Փանոսեան, Սերինէ Յակոբեան, Ուսան Ղարախանեան, Ժորժ Դաւթեան, Սոնա Շիրուանեան, Համազ Մարգարեան, Յովհաննէս Խուդաւերդեան, Մարգարիտ Ալեքսանդրեան, Սոնիկ Կիրակոսեան, Աննիկ Խաչիկեան, Սրբուհի Յովհաննիսեան, Ծաղկուշ Փանոսեան, Հրանուշ Հայրապետեան, Ալիս Անդրիասեան, Էրիքա Գէորգեան, Անուշ Վարդանեան, Մերի Մինասքանեան, Նայիրի Շիրուանեան, Համբարձ Մարկոսեան, Օֆիկ Սիմոնեան, Անահիտ Կիրակոսեան, Բագրատ Ղազարեան, Անգինէ Ասատրեան, Բարդուղ Ծատրեան, Զարթար Յարութիւնեան, Միրօ եւ Մխիթար Խուդաւերդեաններ, Ռիմա Դիլանչեան, Էդգար Աբդալեան, Զանի Թորոսեան, Արբի Թորոսեան, Անիթա Մայիլեան, Արամէ Սիմոնեան, Բագրատ Բարղի, Մեհնուշ Խոռասանդի, ոմն (5 պարագայ):
- 60,000-ական դրամ. Զարմինէ Դաւթեան, Եղսօ Շահբազեան, Երուանդ Խաչիկեան, Թանգիկ Թորոսեան:
- 50,000-ական դրամ. Գոհար Անդրիասեան, Անիթա Ալեքսանդրեան, Նուարդ Թահմազեան, Ժանեթ Գասպարեան՝ իր

ամուսնու՝ Թեւան Միրզայեանի յիշատակին, Փայլիկ Դաւթեան, Քարմէն Հայրապետեան, Անուշ Ղարախանեան, Շուշան Թահմազեան, Յասմիկ Փանոսեան, Անահիտ Մարկոսեան, Աբգար Ղազարեան, Երանուհի Շահբազեան, Յաւերժ Յակոբեան՝ Զանսոն եւ Արփա Շահբազեանների յիշատակին, Ամարաս Թէյմուրեան՝ Զանսոն եւ Արփա Շահբազեանների յիշատակին, Բիւրեղ Զոհրաբեան, Լինդա Շահ-Քառամի, Սիմին Մոհամադի, Սոլմազ Էշղի, Շոջայի, ոմն (2 պարագայ):

- 40,000 դրամ. Մեդիսա Բահռամի:
- 30,000 դրամ. Շահմիր Գաբրիէլեան:
- 20,000-ական դրամ. Զարթիկ Սուքիազեան, Աւօ Նաւասարդեան, Գալուստ Դիլանչեան:

Հանգուցեալ Յովսէփ Բարսեղեանի յիշատակին

- 100,000 դրամ. Եղիա եւ Ժենիկ Յակոբեաններ:
- 50,000 դրամ. Յարութ Բաղդասարեան:

Հանգուցեալ Մարիամ Աւետեանի յիշատակին

- 250,000 դրամ. Վարդգէս Պետրոսեան:
- 200,000 դրամ. Կարօ եւ Անահիտ Քիւիջեաններ:
- 100,000 դրամ. Պերճիկ Քամարզարեան:

Հանգուցեալ Արշալոյս Գուրգէնեանի յիշատակին

- 250,000 դրամ. Վարդգէս Պետրոսեան:
- 150,000 դրամ. Ադրինէ Խաչատրեան:
- 100,000-ական դրամ. Վարուժ եւ Արմինէ Մովսիսեաններ, Պերճիկ Քամարզարեան, Զոհրաբեան ընտանիք:
- 80,000 դրամ. Հելէն Մկրտումեան:

Հանգուցեալ Եսայի Վարդանեանի յիշատակի

- 3,000,000 դրամ. Աստղիկ, Վարդան, Վանիկ եւ Վահիկ Մարկոսեաններ:
- 1,000,000 դրամ. Միսակ Թահմազեան:
- 300,000-ական դրամ. Հայ Ուս. Զհարմահալ Միութիւն, Զաւէն Սիմոնեան:
- 200,000-ական դրամ. Ամրխան Ղազարեան, Անդրէ Յովհաննիսեան, Էդուին եւ Ժուլիեթ Յովսէփեաններ, Տիգրանուհի Մանսուրեան, Յարութ Ղուկասեան, Սեւակ Բաղրամեան:
- 150,000-ական դրամ. Արեւիկ Ալլահվերդեան, Համայակ Յովսէփեան, Վարուժ եւ Անժել Ղարախանեաններ:
- 100,000-ական դրամ. Մաքրուհի Մարկոսեան, Յովսէփ Օհանեան, Հայկազ Պետրոսեան, Մարօ Բաղումեան, Վազրիկ Մարկոսեան, Անուշաւան Աղաբաբայեան, Հայկազ Ղազարեան, Միքայէլ Զոհրաբեան, Արտուշ եւ Ֆրիդա Ղարիբեաններ, Հայկազ եւ Հրանուշ Ղարիբեաններ:
- 60,000 դրամ. Ռաֆֆի եւ Ռիմա Օհանեաններ:
- 50,000 դրամ. Անդրանիկ Ղազարեան:

Հանգուցեալ Էլբիս Նադիրեանի յիշատակին

- 150,000 դրամ. Օֆիկ Գէորգեան:
- 100,000 դրամ. Նուարդ Վարդանեան:
- 50,000 դրամ. Համազ Աբրահամեան:

Հանգուցեալ Սերոժ Դաւթեանի յիշատակին

- 500,000-ական դրամ. Արթին Դաւթեան, Վարդգէս Պետրոսեան:
- 100,000-ական դրամ. Գասպար Մարտիրոսեան, Արփինէ Կարապետեան եւ Եւգինէ Այլազեան:

Հանգուցեալ Ղազար Սահակեանի յիշատակին

- 500,000 դրամ. Վազրիկ Մարկոսեան:
- 350,000 դրամ. «Անի» շէնքի բնակիչներ:
- 150,000 դրամ. Լորեթա Թահմազեան:
- 100,000-ական դրամ. Եզնիկ Ղարիբեան, Նուարդ Կիրակոսեան:
- 60,000 դրամ. Իշխան Թորոսեան:
- 50,000-ական դրամ. Կարօ Պողոսեան, Սեդա Քեշիշեան:

Հանգուցեալ Աննիկ Յակոբեանի յիշատակին

- 500,000-ական դրամ. Արաքս Պողոսեան, Համօ եւ Մանուշ Պողոսեաններ:
- 300,000 դրամ. Երուանդ Պողոսեան:
- 200,000-ական դրամ. Սիլվարդ Սարեան, Սասուն Դադանեան, Ռաֆֆի Խուդավերդեան:
- 150,000-ական դրամ. Աննիկ Քեշիշեան, Սուրէն եւ Արմենուհի Խուդավերդեաններ, Սերժիկ եւ Ալէնուշ Ասատրեաններ:
- 100,000-ական դրամ. Սիլվարդ Թորոսեան, Արշալոյս Խուդավերդեան, Արա եւ Հռիփսիկ Սիմոնեաններ, Միքայէլ Զոհրաբեան, Լուսի Մարտոյեան, Մասիս Ղազարեան:

Հանգուցեալ Երանուհի Փանոսեանի յիշատակին

- 200,000 դրամ. Յովիկ Վարդանեան, «Շաբահանգ Սէյո Էսֆահան» ընկերութիւն:
- 150,000 դրամ. Արեւիկ Ալլահվերդեան:
- 100,000-ական դրամ. Համօ եւ Ռիթա Մկրտչեաններ, Համօ Հայրապետեան, Սուրէն Խուդավերդեան, Անահիտ Փանոսեան, Վազրիկ Մարկոսեան:

Հանգուցեալ Սիմոն Շիրուանեանի յիշատակին

- 200,000 դրամ. Մարգիկ Ղիասեան:
- 100,000-ական դրամ. Վազգէն Անդրիասեան, Արտաւազդ Անդրիասեան, Շաքէ Ղարիբեան:
- 70,000 դրամ. Զանիկ Առաքելեան:
- 60,000 դրամ. Սրբուհի Յովհաննիսեան:

Հանգ. Սարգիս Մինասեան-Բաբումեանի յիշատակին

- 300,000 դրամ. Հրաչ Մինասեան:
- 150,000 դրամ. Քարմէն Արթունեան:

Հանգ. Ալիս Տէր Գրիգորեանս-Ղարախանեանի յիշատակին

- 600,000 դրամ. Հանգուցեալի աղջկայ՝ Արազի ընկերուհիներ:
- 400,000 դրամ. Վրէժ Շիրուանեան:
- 200,000-ական դրամ. Դիանա Ղարախանեան, Անիկ Սիմոնեան:
- 100,000 դրամ. Արա եւ Հռիփսիկ Սիմոնեաններ:

Հանգուցեալ Գառնիկ Թորոսեանի յիշատակին

- 200,000-ական դրամ. Սերժիկ Վարդանեան, Էմմա Պետրոսեան:
- 100,000-ական դրամ. Արուս Ղարախանեան, Լուսի Մարտոյեան:

Հանգուցեալ Ալիս Ղարախանեանի յիշատակին

- 500,000 դրամ. Հայդուկ եւ Արաքս Մարգարաններ:

Ն. Զ. Հայոց Գերեզմանատան Բարեկարգման Մարմին

- 500,000-ական դրամ. Սաքօ Յակոբեան, Ռազմիկ Մկրտչեան:
- 150,000 դրամ. Սեդա Այլազեան:
- 120,000-ական դրամ. Վրէժ Շիրուանեան՝ Հիլդա Շիրուանեանի յիշատակին:
- 100,000-ական դրամ. Վայլեթ Ասատրեան՝ Մատթէոս Ասատրեանի յիշատակին, Ծաղկուշ Մկրտչեան՝ Ասօ Մկրտչեանի յիշատակին, Ծաղկուշ Մկրտչեան՝ Յովիկ Մկրտչեանի յիշատակին:

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» Միութիւն

- 5,000,000 դրամ. Ն.Զ. Հայ Կանանց Գթութեան Միութիւն:
- 4,000,000 դրամ. Վահէ Տէր Մարտիրոսեան:
- 1,000,000-ական դրամ. Արամազդ Խաչեան, Գեւիկ Մկրտչեան, Վանէ Իսաղուլեան:
- 500,000 դրամ. Ն.Զ. Հայ Կանանց Գթութեան Միութիւն:
- 500,000 դրամ. Արման Ալեքսանդրեան:

Լիսբոնի հինգ մարտիկների յիշատակին նուիրած ճեռնարկի առթիւ

- 300,000-ական դրամ. Ն.Զ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն, Հայ Ուս. Զհարմահալ Միութիւն:
- 200,000 դրամ. Փերիոյ Կրթասիրաց Միութիւն:

«Լեւոն Շանթ» Թատերախմբի ներկայացման առթիւ

- 500,000-ական ռիալ. Ն.Ջ. Հայ Կանանց Գթութեան Միութիւն, Թանգիկ Բաղդասարեան, Էջմին Խաչիկեան:
- 300,000-ական ռիալ. Փերիոյ Կրթասիրաց Միութիւն, Ն.Ջ. Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն, Հայ Ուս. Զհարմահալ Միութեան Ն.Ջ. Մասնաճիւղ, Կարին Տէր Մարտիրոսեան:
- 200,000-ական ռիալ. Լեոնիկ Ծատուրեան, Ռազմիկ Մարկոսեան, Մարինէ Հայրապետեան:

Հայ Ուս. «Զհարմահալ» Միութիւն Ն.Զ. Մասնաճիւղ

- 500,000-ական ռիալ. Վարուժ Ղարախանեան, Աղասի Դաւթեան, Արթին Մելիքեան, Մկրտիչ Զհարմահալի, Վարուժ Ղարախանեան, Անի Պետրոսեան, Նւարդ Վարդանեան, Տիգրանուհի Մանսուրեան, Վրդանէս եւ Ռիթա Մկրտչեաններ:
- 450,000-ական ռիալ. Սերոժ Վարդանեան, Նարբէյ Քեշիշեան:
- 300,000-ական ռիալ. Հայրիկ Կարապետեան, Ֆրիդա Ալլահվերդեան:
- 210,000 ռիալ. Սաթենիկ Միրզաբէկեան:
- 200,000-ական ռիալ. Սեդա եւ Այլին Աբդալեաններ, Կարօ եւ Մարօ Պետրոսեաններ, Սոնիա Միրզաբէկեան, Նոռա Շահիջանեան, Ադրինէ Խաչատրեան, Ծաղկուշ Եդգարեան, Նւարդ Վարդանեան, Վարդուհի Ղարախանեան, Լէօ Շահիջանեան, Հայդուկ Մարգարեան:
- 150,000-ական ռիալ. Սեդա Բալեան, Ծաղկուշ Եդգարեան, Սոնիա Միրզաբէկեան, Վեհանոյշ Խուդաբախշեան:
- 140,000 ռիալ. Սեդա Բաբումեան:
- 100,000-ական ռիալ. Սոնիա Միրզաբէկեան, Էմիկ Բալեան, Արմինէ Փանոսեան, Ովսաննա Ղարախանեան, Սալիկ Մարտիրոսեան, Ովսաննա Աբդալեան, Համասփիւռ Մարգարեան:
- 50,000-ական ռիալ. Յաւերժիկ Կարապետեան, Աննիկ Ալեքսանդրեան:

«Արմէն» տարրական դպրոց (2012-2013)

- 1,000,000-ական ռիալ. Լուսին Մինասեան, Լալա Դիլանչեան:
- 500,000-ական ռիալ. Արին Յարութիւնեան, Լուսիա Մատթէոսեան, Անիա Մինասեան, Անիշա Խաչեան, Լիլիան Ալեքսանդրեան, Խաթունիկ Ալեքսանդրեան, Լեւոն Ստեփանեան, Նւարդ եւ Միսակ Խաչեաններ, Թենի Ժարդն Դաւուդ:
- 300,000-ական ռիալ. Մանէ Յովսէփեան, Առնօ Բաբումեան, Փաթրիկ Ակոն:
- 200,000-ական ռիալ. «Քանանեան» դպրոց, «Կատարինեան» դպրոց, Նարբէյ Ղարիբեան, Նայիրի Օհանեան, Միքիա Դաւթեան, Անիսա Զոհրաբեան, Անիա Մարգարեան, Նարին Մասիհ, Նելիանա Գրիգորեան, Ռենիա Ծատուրեան, Արամէ Նաւասարդեան, Լուսիա Գալստեան, Անի Ասատրեան, Ալմարա Թահմազեան, Քրիստին Մարկոսեան, Անիա Թորոսեան:
- 150,000 ռիալ. Ադրինէ Խաչատրեան, Դերիկ Յակոբեան, Լիլիան Միրզախանեան:
- 100,000-ական ռիալ. Վահագն Հայրապետեան, Գայիանէ Մինասեան, Նոյեմի Ղարիբեան, Արեգ Յարութիւնեան, Անի Մկրտչեան, Արսինէ Հայրապետեան:

Ն.Զ. Հայուհեայ Բարեգործական Ընկերութիւն
(*մարտ-սեպտեմբեր* 2013)

- 5,000,000-ական ռիալ. Հայրիկ եւ Յաւերժիկ Կարապետեաններ՝ հանգուցեալ Աշխէն Փուլադեանի յիշատակին՝ փոխան հոգեճաշի, ոմն:
- 3,000,000 ռիալ. Հերոս եւ Վարդուշ Բաղրամեաններ՝ փոխան մատաղի:
- 1,000,000-ական ռիալ. Նւարդ Կիրակոսեան՝ փոխան մատաղի, ոմն (2 պարագայ):
- 500,000-ական ռիալ. Սթելա Դիլանչեան՝ մօր եւ սկեսուրի մահւան 10-րդ տարելիցների առթիւ, Ժանօ Կիրակոսեան՝ Ս. Կուսանաց տօնի առթիւ:
- 200,000-ական ռիալ. Ռիմա Դիլանչեան՝ մօր մահւան 10-րդ տարելիցի առթիւ, Վազրիկ եւ Քառոլին Վարդանեաններ՝ Անուշ Վարդանեանի մահւան 10-րդ տարելիցի առթիւ, Վազրիկ եւ Քառոլին Վարդանեաններ՝ մայրերի օրուայ կապակցութեամբ՝ Անուշ Վարդանեանի յիշատակին, Արմինէ Խաչատրեան՝ Ս. Յարութեան տօնի առթիւ, Անդրանիկ Ղարիբեան, Անի Պողոսեան, Ալիս Թահմասեան, Հրաչ Մինասեան:
- 150,000 ռիալ. Հռիփսիմէ Ռոստոմեան:
- 100,000-ական ռիալ. Սոնիկ Կիրակոսեան, Քնարիկ Աբգարեան, Համաս Մարգարեան՝ մօր եւ սկեսուրի յիշատակին, Սոնիկ Կիրակոսեան՝ Ս. Յարութեան տօնի առթիւ, Սոնիկ Կիրակոսեան՝ Ս. Կուսանաց տօնի առթիւ, Լալա Բաղդասարեան, Քրիստ Ստեփանեան, Վարուժ, Սթելա եւ Սեպուհ Վարդանեաններ, Լորիկ Բաղդասարեան՝ իր մօր յիշատակին:
- 50,000 ռիալ. Հռիփսիկ Թորոսեան՝ Ս. Կուսանաց տօնի առթիւ:

Հայ Դատի Նոր Ջուղայի Յանձնախումբ

- 500,000 ռիալ. Հայդուկ եւ Արաքս Մարգարեաններ՝ Ալիս Ղարախանեանի (Տէր Գրիգորեան) մահւան առթիւ փոխան ծաղկեպսակի:
- 1,000,000 ռիալ. Վարդան Այւազեան՝ Ալիս Ղարախանեանի (Տէր Գրիգորեան) մահւան քառասունքի առթիւ:

Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առնչւող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններին վերաբերող լուրերը՝ «Այիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեան առնչւող լուրերը՝ օրդ. Երանուշ Թահմազեանը, իսկ Շահինշահրի հայ համայնքին վերաբերող տեղեկութիւնները՝ տկն. Այլին Քեշիշեանը։

Որոշ ծրագրերի լուսանկարները տրամադրում է պրն. Գեւիկ Խաչատրեանը։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

خلیفه گری ارامنه جلفای اصفهان
و جنوب ایران
صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com
Tel: +98–311–6243471-2
Fax: +98–311–6270999

ԵՒՏՈՆ ԼՈՅՍ
ԵՒ
ԵԼԵՒ ԼՈՅՍ
Ա Ժ Ջ Ռ
Բ Ի Մ Ն
Գ Լ Յ Վ
Դ Խ Ն Տ
Ե Ծ Շ Ր
Զ Կ Ո Ց
Է Ց Ղ Ւ
Ը Ղ Չ Փ
Թ Ղ Հ Ք